

**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Կազմեց՝ Մանուշակ Աբրահամյանը**

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

III դասարան

Մաս 1

2019-2020 ուտարի

Բովանդակություն

1. «Ամենից լավ տունը» Հովհաննես Թումանյան
2. «Թռչունի մտածմունքը» Հովհաննես Թումանյան
3. «Ի՞նչ են ուտում թռչունները» տեղեկատվական
4. «Կաքավ» մշակումը՝ Արուսյակ Սահակյանի
5. «Կաքավ» տեղեկատվական
6. «Ինչու՞ է երկինքը կապույտ» տեղեկատվական
7. «Ճանապարհորդություն դեպի լուսին» ֆրանսիական ժող. հեքիաթ
8. «Լուսին» տեղեկատվական
9. «Աստղեր» տեղեկատվական
10. «Վայր ընկնող աստղեր» տեղեկատվական
11. «Արև» տեղեկատվական
12. «Աշուն օր» Կոմիտաս
13. «Ագռավն ու աղվեսը» Աթաբեկ Խնկոյան
14. «Վատ ընկերը» Աթաբեկ Խնկոյան
15. «Փեսացու մուկը» Աթաբեկ Խնկոյան
16. «Մկների ժողովը» Աթաբեկ Խնկոյան
17. «Խուլի այծերը» Աթաբեկ Խնկոյան
18. «Էջի ձուն» հայկական ժող. հեքիաթ
19. «Շաշ հյուրը» հայկական ժող. հեքիաթ
20. «Մուկն ու ձուն» Ստեփան Զորյան
21. «Ձյուն» Գեղամ Սարյան
22. «Հեքիաթ փշատերև ծառի մասին»
23. «Եղևնին» Համո Սահյան
24. «Երբ մտքերը սասչում են օդում» Ալբերտ Մորավիա
25. «Կույրերի կարծիքը» Հովհաննես Թումանյան
26. «Խոսող ձուկը» Հովհաննես Թումանյան
27. «Չախորդ Փանոսը» Հովհաննես Թումանյան
28. «Չարի վերջ» Հովհաննես Թումանյան
29. «Մանուկն ու ջուրը» Հովհաննես Թումանյան
30. «Անխելք մարդը» Հովհաննես Թումանյան

Ամենից լավ տունը

Հովհաննես Թումանյան

Էնտեղ, ուր հովը խաղում է ազատ
Ու ջուրն աղմկում, անվերջ փրփրփրում,
Էնտեղ իր բարի, իր սիրող մոր հետ
Մի շատ անհանգիստ տղա էր ապրում,
Մի գորշ խրճիթում,
 Մի հին խրճիթում,
 Գետի եզերքին,
 Ծառերի տակին:

Մի օր էլ եկավ անհանգիստ տղան,
Կանգնեց իր բարի, իր սիրող մոր դեմ.
«Մայրիկ, էստեղից պետք է հեռանամ.
Միակ ձանձրալի տեղը, որ գիտեմ,
Էս գորշ խրճիթն է,
Էս հին խրճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

Թո՛ղ գնամ շրջեմ աշխարհից աշխարհ,
Ճամփորդեմ լավ-լավ տներ տեսնելու,
Ամենից լավը ընտրեմ մեզ համար,
Գամ քեզ էլ առնեմ ու փախչենք հեռու
Էս գորշ խրճիթից,
Էս հին խրճիթից,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Ու գնաց, երկար թափառեց տըղան,
Մեծ ու հոյակապ շատ տներ տեսավ,
Բայց միշտ, ամեն տեղ պակաս էր մի բան...
Ու հառաչելով ետ վերադարձավ
Էն գորշ խրճիթը,
Էն հին խրճիթը,
Գետի եզերքին,
Ծառերի տակին:

«Գտա՞ր, գավա՛կս», հարցրեց մայրը,
Ուրախ, նայելով իր տղի վրա:
«Ման եկա, մայրի՛կ, աշխարհից աշխարհ,
Ամենից սիրուն, լավ տունը, որ կա,
Էս գորշ խճիթն է,
Էս հին խճիթն է,
Գետի եզերքին,
Ծառերի տակին»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրի՛ր քանաստեղծության տղային, մորը:
2. Ի՞նչ երազանք ուներ տղան:
3. Նկարագրի՛ր տղայի խճիթը:
4. Նկարագրի՛ր քո տունը: Տեսանյութ պատրաստի՛ր քո տան մասին և տեղադրի՛ր բլոգումդ:
5. Նկարի՛ր այն տունը, որտեղ կցանկանայիր ապրել:

Թռչունի մտածմունքը

Հովհաննես Թումանյան

Ես ապրում էի մի փոքրիկ տան մեջ
Առատ ու անփույթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
Կեղևը՝ կապույտ:

Նրանից հետո աչքս բաց արի
Մի փոքրիկ բնում,
Տեսա՝ աշխարհքը հարդից է շինած,
Ու մայրս է շինում:

Մի օր էլ, բնից գլուխս հանած,
Նայում եմ դեւ-դեն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերևից շինած,
Մեր բունը վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ, շատ հեռո՛ւ,
Ամեն տեղ գրնում,

Բայց թե աշխարհքը ինչի՞ց է շինած,
Էլ չեմ հասկանում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրիր անձանոթ բառերը և [Էլեկտրոնային քառաբանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ինչի՞ մասին է բանաստեղծությունը: Պատմի՛ր:
3. Նշի՛ր քեզ դուր եկած քառատողը և նկարի՛ր:
4. Քո կարծիքով ինչի՞ց է շինված աշխարհը: Պատմի՛ր աշխարհի մասին:
5. Թռչունին նամակ գրի՛ր:
6. Կարդա՛ բանաստեղծությունը կամ բերանացի ասա: Տեսագրի՛ր կամ ձայնագրի՛ր և տեղադրի՛ր բլոգումդ:

Ի՞նչ են ուտում թռչունները

(տեղեկատվական)

Կարո՞ղ ես պատկերացնել, որ թռչուններն ուտում են ամեն ինչ, նույնիսկ՝ քար:

Մի մեծ թռչունի ստամոքսում մի անգամ գտել են մեխեր, մանրադրամ, բանալիներ, կոճակներ...չորս կիլոգրամ քաշով, պատկերացնո՞ւմ ես:

Միջատակեր թռչունները միջատ են ուտում:

Հատիկակեր թռչունները հատիկ են կտցում, ձկնակերները՝ ձուկ են որսում: Թռչունները նաև մկներ ու օձեր են բռնում:

Կան թռչուններ, որոնք ծաղկահյույթ են խմում, իսկ փայտփորիկը հիվանդ ծառերի փայտանյութով է սնվում:

Գառնանգղը ոսկորներ է կուլ տալիս: Նա մեծ ոսկորները վերնից ցած է գցում, հետո այդ փշրված ոսկորները ուտում է:

Ժամանակ առ ժամանակ թռչունները բերանից դուրս են նետում կերի ավելցուկները՝ բրդի, փետուրների, ոսկորների մնացորդները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր այն տեղեկությունը, որը քո կարծիքով ամենահետաքրքիրն էր:

Կաքավ

Մշակույթ՝ Արուսյակ Մահակյանի

Խոպոտ ձայն ունեցող ու ականջ չունեցող թռչունները չէին սիրում կարմիր կտուցով ու կարմիր տոտիկներով Կաքավին, որն օրնիբուն ման էր գալիս արտերում ու երգում: Նախանձից նրանց ձայնն ավելի էր խոպոտվում:

Մի օր հավաքվեցին ու գնացին Արծվի մոտ գանգատ.

- Թագավորն ապրա՛ծ կենա, էդ Կաքավը անգործ-անբան, ամբողջ օրը երգում է, չի թողնում, որ քո հրամանները լսենք:

Արծիվն էլ երգի հետ գլուխ չուներ և հրամայեց.

- Կաքավին ասեք՝ թող էլ չերգի:

Կաքավը լռեց:

Արտերը սպասեցին, սպասեցին Կաքավի երգին, բայց Կաքավն էլ չէր երգում:

Արտերը կարոտեցին Կաքավի երգին ու խնդիրքի գնացին Արծիվ թագավորին.

Թագավորն ապրա՛ծ կենա, կարմրակտուց, կարմրատոտիկ Կաքավը կա, բայց նրա երգն էլ չկա. մեր հասկերը չեն քաղցրանա:

Արծիվն ասաց՝ թող երգի՛:

Բայց Կաքավն արդեն մոռացել էր իր երգի խոսքերը, միայն մեկ բառ էր հիշում.

- Կըղա՛, կըղա՛:

Մի երկու բառ էլ արտերն էին հիշում.

- Կաղ-կըղա՛, շաղ-կըղա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձի՛ր բացատրել այս արտահայտությունները (դարձվածքները).

ականջ չունենալ -

գանգատ անել -

երգի հետ գլուխ չունենալ -

խնդիրքի գնալ -

2. Ինչո՞ւ մյուս թռչունները չէին սիրում կաքավին: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:
3. Ի՞նչ ասացին թռչունները արծվին: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:
4. Նկարագրի՛ր այս պատմության կաքավին:

5. Քո կարծիքով ինչի՞ մասին էր երգում կաքավը:
6. Ի՞նչ կլինի, եթե ոչ մի թռչուն չերգի:
7. Նամակ գրի՛ր արծիվ արքային:

Կաքավ

(տեղեկատվական)

Կաքավը գեղեցիկ, աղավնուց խոշոր թռչուն է: Նրա ոտքերը, կտուցն ու կոպերը կարմիր են, մարմինը՝ մոխրագույն: Հոնքերի շուրջը սև գիծ կա, որը հասնում է մինչև ականջները: Կաքավի քաշը 350 - 800 գրամ է: Կաքավները չվող թռչուններ են, ուշ աշնանը ոչ մեծ երամներով չվում են տաք երկրներ:

Կաքավի շատ տեսակներ կան: Հայաստանում բնակվում են քարակաքավն ու մոխրագույն կաքավը:

Քարակաքավն ապրում է ժայռոտ, քարքարոտ վայրերում: Մյուս կաքավներն իրենց բները սովորաբար հյուսում են գետնին, քարերի մեջ, թփերի տակ, լավ ծածկում են, քողարկում:

Մայիս-հունիս ամիսներին մայր (եգ) կաքավը 10 - 25 ձու է ածում, թուխս նստում: 23 - 25 օր հետո ձվից դուրս են գալիս նուրբ, շատ փոքրիկ ձագեր, որոնք 1- 2 օր հետո արդեն ոտքի են կանգնում: Շուտով այդ ձագերը ինքնուրույն են ապրում:

Կաքավները շատ չեն թռչում, կյանքի մեծ մասն անցկացնում են արտերում ու դաշտերում: Գեղեցիկ, հպարտ քայլվածք ունեն: Հայաստանում կաքավի անունով նույնիսկ տեղանուններ կան՝ Կաքավասար, Կաքավաձոր, Կաքավաբերդ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր այն տեղեկությունը, որը գիտեիր:

Ինչու՞ է երկինքը կապույտ

(տեղեկատվական)

Ամպեր կամ երկինք նկարելիս մենք միշտ ընտրում ենք կապույտ կամ երկնագույն մատիտներ: Ճիշտ է, երբ նայում ենք վերև՝ երկինքը ծովի պես կապույտ է երևում, և մեր մտքով չի էլ անցնում, որ այդ կապույտի տակ թաքնված են բազմաթիվ այլ գույներ: Դե ուրեմն, ճիշտ ժամանակն է իմանալու. ինչու՞ է երկինքը կապույտ:

Երկիր մոլորակը շրջապատված է օդի շերտերով: Այն օդը, որը մենք շնչում ենք իր մեջ պարունակում է թթվածին, ազոտ, ածխաթթու գազ, մասամբ նաև ջուր և անտեսանելի

մանրէներ: Երբ արևն արձակում է իր շողերը, օդը՝ իր մեջ կուտակած այդ գազերի շնորհիվ տարբեր երանգներ է ստանում՝ սպիտակից մինչև կարմիր, կարմիրից էլ մինչև նարնջագույն, դեղին, կանաչ, երկնագույն, կապույտ, մանուշակագույն . . .

Եվ ահա, երբ այդ բազմագույն ճառագայթն անցնում է օդի հաստ շերտով, օդի մասնիկները շաղ են տալիս այդ բոլոր գույները, իսկ առավել շատ, նրա մանուշակագույն, կապույտ և երկնագույն մասերը, այդ պատճառով էլ երկինքը գունավորվում է երկնագույնով:

Պարզվում է, որ արևի ճառագայթներն են ներկում օդը մեր գլխավերևում: Իսկ երբ արևը հեռանում է ու իր տեղը ժամանակավորապես զիջում է լուսնին՝ երկինքը սև է երևում, պատճառն այն է, որ լուսինը չի կարող արևի պես ճառագայթներ արձակել:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերը և [Էլեկտրոնային բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ի՞նչ է պարունակում օդը, որը մենք շնչում ենք:
3. Ի՞նչ կուզեիր, որ երկնքից թափվեր:
4. Փորձի՛ր բացատրել, թե ինչո՞ւ է երկինքը կապույտ:

Ճանապարհորդություն դեպի Լուսին

Ֆրանսիական ժողովրդական հեքիաթ

(մաս 1)

Ժուկով-ժամանակով մի փոքրիկ, շատ փոքրիկ գյուղ կար: Էս գյուղի բնակիչներին կոչում էին բալզաթցիներ, որովհետև գյուղի անունը Բալզաթ էր: Նրանք շատ միամիտ մարդիկ էին: Չէ, միամիտ չէին, ճիշտը որ ասենք՝ խելքից մի քիչ պակաս էին:

Գյուղամիջում մի եկեղեցի կար: Եկեղեցու բակում մոշի մի թուփ էր աճում: Թուփը տարեցտարի մեծանում էր, խոշորանում և եկեղեցու դուռը համարյա փակել էր. Մարդիկ հազիվ էին այնտեղ մտնում:

Մի օր էլ գյուղացիները հավաքվում են ու որոշում՝ եկեղեցին հեռացնեն, որ հանգիստ ելումուտ անեն: Գյուղի կանայք մի երկար, հաստ պարան են գործում: Տղամարդիկ պարանը երեք անգամ փաթաթում են զանգակատան շուրջը: Ահել-ջահել հավաքվում են, իրար կողքի շարվում, պարանից քաշում ու գոռում.

Մե՛կ-երկո՛ւ, քաշեցի՛նք, մե՛կ-երկո՛ւ, քաշեցի՛նք...

Քաշում են, քաշում, պարանը քիչ-քիչ ձգվում է, երկարում. բալզաթցիներն էլ մի երկու սանտիմետր հեռանում են եկեղեցուց ու կարծում են, թե եկեղեցին է շարժվել: Ուրախանում են ու գոռում.

Եկեղեցին տեղից շարժվո՛ւմ է:

Շատ որ ձգում են, պարանը կտրվում է, և բալզաթցիները իրար վրա են թափվում: Վեր են կենում, շորները թափ տալիս ու նայում եկեղեցուն: Նայում են ու շատ են զարմանում, որ եկեղեցին մի մատնաչափ էլ չի շարժվել: Առաջվա պես իր տեղում է նաև մոշի թուփը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կապույտով ներկի՛ր ո՞վ հարցին պատասխանող բառերը:
2. Կարմիրով ներկի՛ր ովքե՞ր հարցին պատասխանող բառերը:
3. Տեքստից գտի՛ր տրված բառերի հականիշ բառերը:

Խորամանկ -

Սխալ -

Ավել -

Ծեր -

Մոտենալ -

4. Տրված բառերից ընտրի՛ր համապատասխան գույգերն ու կազմի՛ր բարդ բառեր:

Գյուղ, մատ, տուն, չափ, տղա, մեջ, զանգակ, մարդ

5. Լրացրո՛ւ բաց թողնված բառերը:

Նրանք շատ միամիտ էին:

Գյուղամիջում մի կար:

Եկեղեցու բակում մոշի մի էր աճում:

Ճանապարհորդություն դեպի Լուսին

Ֆրանսիական ժողովրդական հեքիաթ

(մաս 2)

Մի անգամ էլ բալզաթցիները հորիզոնում թույլ, նարնջագույն լույս են նշմարում և սկսում են դեսուդեն վազել ու գոռալ.

Ժողովո՛ւրդ, երկինքը վառվո՛ւմ է, երկինքը վառվո՛ւմ է: Թմբո՛ւկ զարկեք, շուտ, աստիճաննե՛ր բերեք, դույլերով ջո՛ւր հասցրեք:

Մեծ իրարանցում է սկսվում: Երբ ամեն ինչ պատրաստ է լինում, մարդիկ մոլորված իրար հարցնում են, թե ո՞ր կողմից են հանգցնելու կրակը:

-Ի՞նչ եք շվարել,- գոռում է գյուղի առաջնորդը,- հրե՛ն կրակը: Առա՛ջ, իմ հետևի՛ց:

Ասում է ու վազում: Գյուղացիները՝ նրա հետևից: Մի քանիսը աստիճաններ են տանում, մյուսները՝ ջրով լի դուլերը: Գոռում-գոչունով, հարայ հրոցով վազում են, գյուղից դուրս գալիս՝ ուրախանալով ու պարծենալով, թե տեսեք, է՛, ինչ մարդիկ ենք մենք՝ բալզաթցիներս, որ մի մարդու նման գնում ենք աղետից փրկվելու:

Բայց մի քիչ որ առաջ են գնում ու մոտենում անտառին, հանկարծ տեսնում են, թե կլորերես լուսինն ինչպե՛ս է ծառերի կատարից հորիզոն բարձրանում և իր նարնջագույն լույսով լուսավորում ամբողջ Բալզաթը: Եվ գլխի են ընկնում, որ անտառի ծայրին ոչ մի հրդեհ էլ չի եղել, այլ սովորական լուսինն է:

Բա ի՞զո՛ւր էին բոլորը ծաղրում բալզաթցիներին: Բայց, պարզ է, նրանց էլ դա դուր չէր գալիս:

Մի օր էլ գյուղի առաջնորդը հավաքում է իր տասներկու խորհրդականներին և ասում.

Ժամանակն է, որ մարդկանց աչքում Բալզաթի անունը բարձրանա: Էն օրը, որ տեսա, թե լուսինը ինչպես էր բարձրանում, մտքովս մի բան անցավ ու մինչև հիմա հանգիստ չի տալիս ինձ: Ասում եմ՝ գնանք լուսինը գրավենք, տեսնենք՝ ի՛նչ կա-չկա վրան: Պետք է առաջինը հասնենք լուսին և բալզաթցիների փառքն ու պատիվը աշխարհով մեկ անենք:

Խորհրդականներն ուրախությունից ծափ են տալիս:

-Սպասեցեք,-ասում է նրանցից մեկը,- բա ո՞նց ենք լուսին հասնելու:

-Դա շատ հեշտ է,- պատասխանում է առաջնորդը: -Այ, տեսեք, հիմա մենք տասներեք մարդ ենք: Եթե մեզնից ամեն մեկն իր հետ մի հարևան բերի՝ քսանվեց կղառնանք: Քսանվեց բալզաթցիներից ամեն մեկը մի տակառ կվերցնի ու գլորելով կտանի գյուղից դուրս, կբարձրացնի այն բլրի վրա, որտեղ առաջ մեր ջրաղացն էր: Տակառները կշարենք իրար վրա և, գրո՛ղը տանի, համոզված եմ, որ կմոտենանք լուսնին ու մի ցատկով կիջնենք նրա վրա:

Բալզաթցու խոսքը խոսք է, որ ասաց՝ կանի: Լիալուսնի հենց առաջին օրը մեծ տանջանքով ու չարչարանքով քսանվեց տակառները գլորում բարձրացնում են բլուրը: Առաջնորդը կանգնում է առաջին տակառի վրա: Պարան են բերում, մի ծայրին կեռիկ են ամրացնում և մտցնում երկրորդ տակառի անցքի մեջ, իսկ մյուս ծայրը տալիս են առաջնորդին: Մա քաշում, վեր է բարձրացնում երկրորդ տակառը, դնում առաջինի վրա, իսկ ինքը վեր է մագլցում: Նույն ձևով բարձրացնում է երրորդ, հետո չորրորդ, հինգերորդ տակառները, որոնք աշտարակի նման դարսվում են իրար վրա: Երբ առաջնորդը հասնում է քսանվեցերորդ տակառին, և էլ ուրիշ տակառ չի մնում, վերևից գոռում է.

Ժողովո՛ւրդ, համարյա տեղ եմ հասել: Մի քիչ էլ որ բարձրանամ, ձեռքս լուսնին կդիպչի: Մի տակառ էլ տվե՛ք:

Ներքևից բալզաթցիները թե՛ գյուղում էլ տակառ չի մնացել: Մի քիչ համբերի, գնանք հարևան գյուղից պարտքով մի տակառ ուզենք, բերենք:

Թո՛ւ,- վերևից բարկանում է առաջնորդը: - Տնաշեննե՛ր, գլխներիդ մեջ մի կոպեկի խելք չկա, է՛: Տո հենց ամենաներքևի տակառը հանել տվեք:

Բալզաթցիները ենթարկվում են: Տեղահան են անում առաջին տակառը, որին հենված էր ամբողջ աշտարակը: Տակառը մի կերպ դուրս են քաշում, բայց հանում են թե չէ, մեկ էլ՝ թըրը՝ մփ, աշտարակը միանգամից դողդալով փուլ է գալիս: Տակառների հետ ցած է գլորվում նաև առաջնորդը: Ոտ ու ձեռը ջարդում է, մի չորս կող էլ հետը: Գյուղացիները զարմանքից մնում են բերանները բաց կանգնած, և ոչ մեկը ծպտուն չի հանում:

... Ու մինչև օրս էլ չեն հասկանում, թե այդ ինչպե՛ս պատահեց, որ այդքան խնամքով մշակված ճանապարհորդությունը այդպիսի տխուր ավարտ ունեցավ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր տրված բառերը.

Իրարանցում -

Նշմարել -

Շվարել -

Աղետ -

2. Համառոտ պատմի՛ր, թե ինչպես էին բալզաթցիները եկեղեցին տեղից շարժում և այդ հատվածը վերնագրի՛ր:

3. Բալզաթցիների արարքները թվարկի՛ր.

Ա) եկեղեցին տեղաշարժելը

Բ)

Գ)

4. Ինչպիսի՞ն էին բալզաթցիները:

5. Հեքիաթ հորինի՛ր:

«Բալզաթցիների նոր արկածները»

Լուսին

(տեղեկատվական)

Երկնքում Արևն ու Լուսինը նույն մեծության են թվում:

Բայց չէ՞ որ ամեն ինչ հեռավորությունից է կախված. հեռվում սավառնող մեծ ինքնաթիռը մեզ ավելի փոքրիկ է թվում, քան մեր կողքին նստած թռչնակը:

Արևը մեզանից շատ ավելի հեռու է, քան Լուսինը: Դրա փոխարեն այն ավելի մեծ է Լուսնից: Լուսնի մակերևույթը տխուր տեսք ունի: Այն շատ մուգ գույնի է և ծածկված է մեծ ու փոքր փոսերով: Լուսնի վրա նաև լեռներ կան: Փոսերը մեզ երևում են մուգ կետերի տեսքով:

Լեռներն էլ սրագագաթ չեն, մի տեսակ կլոր տեսք ունեն:

Լուսնի վրա ո՛չ օդ կա, ո՛չ ջուր: Պարզ է, որ այնտեղ կյանք չի կարող լինել:

Լուսինն իր լույսը չունի. այն ընդամենը փոխանցում, անդրադարձնում է արևի՝ իր վրա ընկած լույսը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերը և [Էլեկտրոնային բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Արևն է մեզանից հեռու, թե՞ լուսինը:
3. Արևն է ավելի մեծ, թե՞ լուսինը:
4. Շարունակի՛ր.

Արևը մեզանից շատ ավելի հեռու է, քան ...

Այն շատ մուգ գույնի է և ...

Լուսնի վրա ոչ օդ կա, ...

Լուսինն իր լույսը չունի ...

Աստղեր

(տեղեկատվական)

Երբ Արևը մայր է մտնում, երկինքը մթնում է, և այնտեղ հայտնվում են աստղերը: Դրանք անթիվ-անհամար են: Այնքան շատ, որ ինչքան էլ ուզենանք, չենք կարողանա հաշվել: Դա միայն գիտնականները կարող են անել: Բայց գիտե՞՞ք, որ իրականում աստղերն էլ Արևի նման մեծ են, Արևի նման պայծառ ու տաք: Այսինքն՝ նրանք բոլորն էլ հրեղեն վիթխարի գնդեր են, ինչպես Արևը: Բայց աստղերը մեզանից միլիոն անգամ ավելի հեռու են, քան

Արևը: Իսկ մեզ մոտիկ, սեղանին դրված մոմի լույսն ավելի պայծառ է երևում, քան հեռվում գտնվող մեքենայի կամ խարույկի պայծառ լույսը:

Այդ է պատճառը, որ աստղերը մութ երկնքում ընդամենը թույլ լույս արձակող կետեր են թվում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր անձանոթ բառերը և [էլեկտրոնային քառաբանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Շարունակի՛ր.

Երբ Արևը մայր է մտնում, ...

Բայց աստղերը մեզանից միլիոն անգամ հեռու են, ...

Այդ է պատճառը, որ ...

3. Գրի՛ր հականիշ բառեր.

Մթնել -

Շատ -

Մեծ -

Տաք -

Հեռու -

Մութ -

Թույլ -

4. Կարմիրով ներկի՛ր այն նախադասությունը, որտեղ թիվ կա:
5. Տեքստից առանձնացրո՛ւ ի՞նչ, ինչե՞ր, ինչպիսի՞ հարցերին պատասխանող բառեր և գրի՛ր համապատասխան սյունակում.

Ի՞նչ	Ինչե՞ր	Ինչպիսի՞

Վայր ընկնող աստղեր

(տեղեկատվական)

Բոլորն էլ սիրում են անամպ, խաղաղ երեկոներին դիտել երկինքը, գմայլվել մութ գիշերով, աստղերով և արծաթափայլ լուսնով: Բայց... սա ի՞նչ է: Հրավառ մի կետ գիծ քաշեց երկնքում և մարեց: «Աստղ ընկավ», -ասում են տեսնողները:

Ա՞ստղ... Ո՛հ, դա ինչ-որ ուրիշ բան է, քանի որ աստղերը չեն ընկնում: Դրանք տիեզերական տարածության մեջ շարժվող տարբեր չափի քարեր են, որոնք ձգվելով Երկրի կողմից, շատ մեծ արագությամբ մտնում են մթնոլորտ և այրվում: Այդ այրման կարճատև բռնկումն էլ մենք տեսնում ենք և ասում. «Աստղ ընկավ»:

Երկնային այս փոքրիկ «հյուրերը», որոնք այրվում են ինչ-որ տեղ՝ Երկրից շատ բարձր, կոչվում են ասուպներ, երկնաքարեր:

Հատկապես օգոստոս-նոյեմբեր ամիսներին Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը հանդիպում է տիեզերական շատ քարերի: Ահա թե ինչու այդ ժամանակ հաճախ կարելի է երկնքում տեսնել հրեղեն բռնկումներ:

Միշտ պետք է հիշել. դրանք աստղեր չեն, աստղերը երբեք վայր չեն ընկնում: Դրանք տիեզերական քարեր են, որոնք, մեծ արագությամբ անցնելով երկրագնդի մթնոլորտային շերտով, շփվում են օդի հետ, բռնկվում և մարում: Երբեմն հատուկենտ խոշոր երկնաքարերի, այնուամենայնիվ, հաջողվում է անցնել մթնոլորտի միջով և ընկնել Երկրի վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրի՛ր այն տեղեկությունը, որը տեքստից իմացար:

Արև

(տեղեկատվական)

Ամեն օր Արևը դուրս է գալիս, ու լույսը բացվում է, իսկ երբ մայր է մտնում, օրը մթնում է: Իրականում մեր երկրագունդը պտտվում է Արևի շուրջը, և Արեգակն է լուսավորում Երկիրը: Արևը նաև տաքություն է տալիս մեզ: Այն շիկացած գունդ է. նրա վրա ամեն ինչ հալված եռում է: Եթե Արեգակը չլինի, Երկրի վրա ամեն ինչ կսառչի: Ե՛վ բույսերը, և՛ կենդանիները, և՛ մարդիկ չեն կարողանա ապրել առանց լույսի և ջերմության, ինչպես և՛ առանց օդի:

Ուրեմն առանց Արևի Երկրի վրա չի կարող կյանք լինել:

Երբ մեզ մոտ մութ է, Արեգակը երկրագնդի հակառակ կողմն է լուսավորում: Բայց այդ ժամանակ իր լույսը տալիս է լուսնին, Լուսինն էլ փոխանցում (անդրադարձնում) է մեզ, և գիշերը սարսափելի խավար չի լինում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դուրս գրիր անձանոթ բառերը և [էլեկտրոնային բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Գրի՛ր հոմանիշ բառեր.

Արեգակ -

Ջերմություն -

Խավար -

3. Գիշերը երկնքում ի՞նչ էս տեսնում;
4. Լուսինը երկնքում ի՞նչ է անում:
5. Աստղերը երկնքում ի՞նչ են անում:
6. Շարունակի՛ր.

Իրականում մեր երկրագունդը պտտվում է ...

Եթե Արեգակը չլինի, ...

Երբ մեզ մոտ մութ է, ...

Աշուն օր

(հատված)

Կոմիտաս

Սևուկ ամպեր վար եկան

Օրան, օրան,

Սարի վրա շար եկան:

Ծագեց առավոտ

Պաղեց, սառավ օդ:

Տեղաց անձրև մաղ տալով,

Մարմանդ-մարմանդ,

Հոգնած տերև շաղ տալով:

Երկիր քուն դրավ,

Եվ թռչուն թռավ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գրի՛ր պակասող բառերը:

Սևուկ _____ վար եկան

Օրան, օրան,

Սարի վրա շար _____:

Ծագեց առավոտ

Պաղեց, սառավ _____:

Երկիր քուն դրավ,

Եվ _____ թռավ:

2. Կազմի՛ր «աշնանային» բառակապակցություններ:

_____ տերև

_____ ամպ

_____ օդ

_____ եղանակ

_____ օր

3. Նշի՛ր քեզ դուր եկած տողերը և նկարի՛ր:

4. Պատմի՛ր դպրոցի պարտեզում ապրող աշնան մասին: Լուսանկարի՛ր պարտեզի աշունը, նաև նկարի՛ր:

Ագռավն ու աղվեսը

Աթաբեկ Խնկոյան

Բախտի բերմամբ,

Թե պատահմամբ,

Մի մեծ ագռավ

Մի գունդ պանիր

Դաշտում գտավ,

Կտուցն առավ,

Ծառին թռավ:

- Օ՛, ի՛նչ պանիր, դեղին ոսկի...

Բայց դեռ չառած համը իսկի,

Աղվեսն անցավ ծառի մոտով,

Գերվեց, էրվեց պանրի հոտով:
 Վազեց գնաց բերնի ջուրը,
 Եվ թուլացան կուռն ու ճուռը,
 Էն ժամանակ իրա ձևին,
 Ծառի տակից, աչքն ագռավին,
 - Հեզիկ, նազիկ, Փափկամազիկ,
 Բացեց լեզուն անո՛ւշ, մեղո՛ւշ:
 Թափե՛ց, չափե՛ց շաքար ու նուշ:
 Ես քո գերին
 Քո էդ սևիկ
 Վառ աչքերին,
 Նուրբ ծալքերով
 Զույգ թևերին:
 Մի դու մտիկ,
 Էդպես քթիկ,
 Էդպես ճտիկ,
 Մախմուր ազին,
 Խաս ու դումաշ,
 Ատլասն հազին:
 - Գիտե՛մ, անշուշտ, իմ քուրիկի
 Ձայնն էլ կըլի հրեշտակի:
 Երզի, քուրիկ, մի ամաչի,
 Իմ ուզածը մի մեծ բան չի:
 Թե որ չքնաղ էդ տեսքիդ հետ
 Երգելում էլ եղար վարպետ,
 - Օ՛, կդառնաս, իմ մաքրուհի,
 Թռչունների մայր թագուհի:
 Ագռավ ազին իրեն տված
 Գովեստներից շշմած, ուռած՝
 Ագռավային
 Բկովը մին
 Որ չկռռա՛ց,
 Պանիրն ընկավ ծառիցը ցած,
 Շողոքորթը ըռիսեց, գնաց:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրիր քեզ անձանոթ բառերն ու բառարանի օգնությամբ բացատրի՛ր:
2. Նշի՛ր առակի ամենատխուր հատվածը:

3. Բնութագրի՛ր առակի գլխավոր հերոսներին:
4. Փորձի՛ր արդարացնել աղվեսին:
5. Առակը համառոտ պատմի՛ր և նկարի՛ր:

Վաստ ընկերը

Աթաբեկ Խնկոյան

Մի անգամ
 Առյուծ արքան
 Մոնչում էր կողի ցավից.
 Գազանները ամեն կողմից
 Եկան հիվանդ արքային տեսնելու,
 Բայց մեջներին չկար աղվեսը:

Էնտեղ մեկն էլ մի պառավ գել
 Ասավ. – Արքա, ախր ի՞նչ կա,
 Որ աղվեսը՝ հաճուճ-մաճուճ
 Թիզ ու կեսը, քեզ չի հարգել,
 Տես, չի եկել:

Ցավը թողած՝ արքան գոռաց,
 Թե՛ հա թռեք, էն ըմբոստին
 Մոտս բերեք:

Հինգ, վեց գազան ելան հասան,
 Էն աղվեսին մի կերպ գտան,
 Պատճառն ասին, բերին ատյան:

Արքան գոռաց.

- Ո՞ւր ես, մեռած...

- Ասեմ ձեռաց,-աղվեսն ասաց.

- Տեր վեհափառ, խնդիրս առ,

Որ լսեցի՝ դու հիվանդ ես,

Էլ ինչ ասեմ, ինձ հո գիտես,

Ինչպես գլխիս կրակ վառած

Եվ պատանս էլ թնիս առած

Հա էստեղ, հա էնտեղ,

Վերջը գտա ցավիդ դեղը,

Գելի մորթին արա մուշտակ,

Միսը՝ շորվա, խմի տաք-տաք,
Քրտնեց կողո, կանցնի դողո:

Որ չտվեց էսպես թելին,
Իսկույն գետին դրին գելին:
Արքան հագավ գելի կաշին,
Միսը կերավ նախաճաշին:

Քրտնեց կողո, անցավ դողո
Մեջտեղ գնաց զրպարտողո:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դո՛ւրս գրիր քեզ անձանոթ բառերն ու [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ինչպիսի՞ն էր ստեղծագործության աղվեսը:
3. Ինչպիսի՞ն էր ստեղծագործության գայլը:
4. Ստեղծագործությունից դուրս գրի՛ր 3-ական միավանկ և երկվանկ բառ:

միավանկ	երկվանկ

5. Տրված բառերի հականիշները գրի՛ր.

Վախկոտ -

Մեղավոր -

Հիվանդ -

Ուժեղ -

Պատավ -

6. Շարունակի՛ր ըստ օրինակի.

Օրինակ՝ ցավ-ցավել

Հիվանդ -

Դող -

Նախաճաշ -

Քրտինք -

Հագուստ -

Փետացու մուկը

Աթաբեկ Խնկոյան

(մաս 1)

Մուկը ուզեց
Ամուսնանալ
Եվ հզորին
Փետա դառնալ:
Նրան ասին,
Որ աշխարհում
Արեգակն է
Միայն հզոր:
Մուկը տեղից
Վեր է կենում,
Իրեն կոկում
Ու փառավոր
Գարնան մի օր,
Ջերմ առավոտ
Ուղիղ գնում
Արևի մոտ:
Գնում, ասում.
- Բարև, բարև,
Էս աշխարհի հզոր արև՝
Քո դատրիկը
Հեզիկ-նազիկ,
Հեզիկ-նազիկ
Ոսկեմազիկ,
Տուր ինձ՝ տանեմ,
Անեմ հարսիկ:
- Ես որտեղի
Հզորն եմ որ...
Տե՛ս էն ամպն է
Ինձնից հզոր,
Մին էլ տեսար
Արագ, արագ,
Կտավի պես

Երկար-բարակ
Տարածվում է,
Կապուտակում,
Վարագույրով
Դեմքս ծածկում, -
Արեգակը
Մկանն ասավ:
Մուկը վազեց
Ամպին հասավ.
- Այ, հզոր ամպ,
Բարև, բարև.
Ու՞ր ես գնում
Վերև, վերև:
Քո դատրիկը
Հեզիկ-նազիկ,
Հեզիկ-նազիկ
Ոսկեմազիկ,
Տուր ինձ՝ տանեմ
Անեմ հարսիկ:
- Ես որտեղի՞
Հզորն եմ որ...
Այ, քամին է
Ինձնից հզոր:
Որ բարկացավ,
Էլ գուրթ չունի,
Ուր ուզենա՝
Ինձ կտանի:
Նա ինձ կանի
Փաթիլ-փաթիլ,
Ու կքամի
Կաթիլ-կաթիլ:

Մուկը վազեց
Հասավ քամուն.
- Քամի՛, ասավ,
Հգոր ես դուն:
Ամպին կանես
Փաթիլ-փաթիլ
Ու կքամես
Կաթիլ-կաթիլ:
Քո դատրիկը
Հեզիկ-նազիկ,
Հեզիկ-նազիկ
Ոսկեմազիկ,
Տուր ինձ՝ տանեմ
Անեմ հարսիկ:
- Ե՞ս եմ հզոր...
Երանի՛ քեզ.
Չէ՛, չէ՛, մկնիկ,
Դու խաբվել ես:
Զորեղ տեսնես
Դու սև գոմշին,
Կուզեմ պոկեմ,
Բերեմ կաշին,
Բայց որտեղի՞ց...
Ինչի՞ տեր եմ,
Որ ուզածս
Պոկեմ, բերեմ:

Մուկը դիմեց
Գոմշին արտում՝
Լուծ քաշելիս,
Հոգնած, տրտում.
- Գոմե՛շ,-ասավ,-
Դու հզոր ես,
Ուժի տեր ես,
Քո դատրիկը
Հեզիկ-նազիկ,

(մաս 2)

Հեզիկ-նազիկ
Ոսկեմազիկ,
Տուր ինձ տանեմ,
Անեմ հարսիկ:
- Ե՞ս եմ հզոր
Եվ ուժի տե՞ր...
Որ եղպես է,
Բա էս անտեր
Գութանն ի՞նչ է
Ինձ չարչարում
Ու իմ ուսին
Ցավ պատճառում:
Գոմշին թողեց,
Վազեց գնաց.

-Հզոր գութան,-
Ասավ,- մի կաց...
Օրոր, շորոր
Արտ ես վարում,
Հողում խոր-խոր
Ակոս շարում,
Քանի՛ - քանի՛
Լուծ ու լծկան
Ճիպոտի տակ
Քեզ քաշող կան:
Քո դատրիկը
Հեզիկ-նազիկ,
Հեզիկ-նազիկ
Ոսկեմազիկ,
Տուր ինձ՝ տանեմ,
Անեմ հարսիկ:
- Ուժիս գովքը
Այլ կերպ կտան.
Հզորն ո՞վ է,
Էն էլ գութա՞ն...

Որ հզոր եմ,
 Ինչո՞ւ համար
 Հողի միջին
 Մութ ու խավար՝
 Ինձնից ուժեղ
 Արմատ ու սեզ
 Ինձ ջարդում են
 Ուզածի պես:
 - Արմա՛տ, արմա՛տ,
 Հզոր արմատ,-
 Ասավ փեսա
 Մուկը մի մատ:
 Դու շատ գոռ ես,
 Դու հզոր ես,
 Հզոր գութան
 Դու կկոտրես:
 Քո դստրիկը
 Հեզիկ-նազիկ,
 Հեզիկ-նազիկ
 Ոսկեմազիկ,
 Տուր ինձ տանեմ,
 Անեմ հարսիկ:
 - Արմատը՝ ո՞վ,
 Հզորը՝ ո՞վ,
 Վեր կաց գնա
 Դու մկան քով,
 Ա՛յ ձեր ցեղը
 Շատ հզոր է,
 Գետնի միջին
 Բուն կփորե,
 Կորոնե

Սեզ ու արմատ,
 Կուտե, կուտե
 Մեկ-մեկ, հատ-հատ:
 Մուկը վազեց
 Մկնուհու մոտ.
 - Նանի՛, -ասավ,-
 Մեր հին ծանոթ,
 Ա՛յ, արմատը
 Խոսքիս վկա,
 Քեզնից հզոր
 Չկա՛, չկա՛,
 Քո դստրիկը
 Հեզիկ-նազիկ,
 Հեզիկ-նազիկ
 Շեկլիկ մազիկ,
 Տո՛ւր ինձ՝ տանեմ.
 Անեմ հարսիկ:
 - Բարով, մկնի՛կ,
 Բարով տեսա,
 Ես քեզ գոքանչ,
 Դու ինձ փեսա:
 Իմ դստրիկս
 Հեզիկ-նազիկ,
 Շեկլիկ-մեկլիկ
 Շեկլիկ մազիկ,
 Կտամ ես քեզ,
 Արա հարսիկ:
 Մուկը մկան
 Առավ փեսա.
 Էս աշխարհի
 Օրենքն է սա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Դո՛ւ րս գրիր քեզ անծանոթ բառերն ու [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ստեղծագործության հերոս մկան անունը գրված չէ, դու հորինի՛ր:

3. Դուրս գրի՛ր ստեղծագործության բոլոր հերոսներին:
4. Քո կարծիքով աշխարհում ամենահզորն ի՞նչն է: Փորձի՛ր այդ հզորի մասին պատմել:
5. Այս ստեղծագործության մկանը մի քանի խորհուրդ տո՛ւր:
6. Ստեղծագործությունից առանձնացրո՛ւ ի՞նչ և ինչպիսի՞ հարցերին պատասխանող 5-ական բառ և մուտքագրի՛ր համապատասխան սյունակում:

Ի՞նչ	Ինչպիսի՞

Մկների ժողովը

Աթաբեկ Խնկոյան

Սով էր, սով էր մկստան,
 Կատվի ձեռքից լկստան
 Գզիրն ընկավ դռնեդո՛ւտ
 Էլ չթողեց տուն-կտուր
 Ջահել ահել գեղովի,
 Կանչեց, բերեց ժողովի՝
 Թէ ինչ անեն, որ կատվեն
 Մի հնարքով ազատվեն:
 Եկան գյուղի ջոջերը
 Երկար բարակ պոչերը,
 Մասնակցեցին խորհրդին,
 Մի մուկ խոսեց իր հերթին,
 - Լսե՛ք, մկներ, ցեղակից,
 Չունեմ որդի, կողակից,
 Ես մի անտեր ծերուկ եմ,
 Բայց պատվավոր մի մուկ եմ.

Պակսեց ուժը իմ ոտի,
 Պետք է մեռնեմ անոթի
 Սովն է չոքել դռանը,
 Ախ, մռռանը, մռռանը,
 Վեր է ընկել, մառանը,
 Ինչքան ասես նազ անի,
 Ստից սատկի, տագ անի,
 Մուկ տեսնելիս, վագ անի,
 Գլխից բռնի, կախ անի,
 Թաթովը տա, խաղ անի,
 Ուտի, քեֆը չաղ անի,
 Էսպես զուլում ու կրակ,
 Դեռ աչքերն էլ ջուխտ ճրագ:
 Բայց թե ազնիվ մեր ցեղը
 Կորչելու չէ զուր տեղը...
 Ա՛յ բերել եմ ես մի զանգ,

Ծափ, ծլնգոց,
 Մեջը զնգոց.
 Կատվի վզից մենք կախ տանք,
 Որ ինչքան էլ օրորա,
 Որ ինչքան էլ շորորա,
 Ստից սատկի, տազ անի,
 Գալն իմանանք գազանի:
 Է՛, զանգը ո՞վ կախ անի.
 - Ալո դո՛ւ:
 - Ալո՞ն տանի:
 - Բալո դո՛ւ:
 - Բալո՞ն կախե:
 - Չստո, դո՛ւ:
 - Չստոն կաղ է:
 - Մստո, դո՛ւ:
 - Մստոն կարճ է:
 - Փստո, դո՛ւ:
 - Էդ էլ խի՞ դճ է:

- Համբո, դո՛ւ:
 - Ես տկար եմ:
 - Չամբո, դո՛ւ:
 - Ասենք տարա,
 Բա որ կատուն գա ինձ վրա՞:
 - Բտոն, Խտոն թող մեկից
 Բոնեն կատվի քամակից:
 - Ի՞նչ է խոսում չոր գանգը,
 Լավ է դու տար էդ գանգը,
 Էլ ի՞նչ Բտո, ի՞նչ Ֆստան,-
 Ճստաց Բտոն ճստճստան:
 - Լո՛ի՛, հանդուզն
 Կոտորվե՛ք դուք,
 Վախկոտներիդ ես թաղեմ,
 Ճա՞ն ասեմ, թե՞՞ զանգ կախեմ,-
 Գոչեց ջոջը,
 Քաշեց պոչը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր տրված բառերն ու արտահայտությունները:

Լկատան -
 գզիք -
 ահել -
 ջոկ -
 հնարք -
 կողակից -
 անոթի -
 զուլում -
 տկար -
 հանդուզն -
 պոչը քաշել -

2. Փորձի՛ր ինքդ բացատրել:
 սովն է չոքել դռանը -
 ցավն է ունի իր դեղը -
 չոր գանգ -

3. Կատվի մասին պատմի՛ր:
4. Նկարագրի՛ր Մկստանը և նկարի՛ր (փողոցները, տները, լույսերը. . .):
5. Կատուն ամեն ինչ լսել էր և գլուխ գովելով իր ընկերների մոտ պատմում էր այդ ժողովի մասին:

Գիտե՞ք, որ մկները ժողով էին արել, որ ...

Խուլի այծերը

Աթաբեկ Խնկոյան

Մի խուլ մարդ երեք այծ ուներ: Մեկի պոզը կոտրած էր: Ինչպես է լինում, մի օր այծերը կորում են: Տերն ընկնում է դես դեն այծերն գտնելու:

Նա պատահում է մի ուրիշ խուլ մարդու՝ վար անելիս, և հարցնում է.

- Բարի աջողում, ապեր, այծերս չե՞ս տեսել:

- Լավ է՝ այսպես ցանեմ, - ձեռը մի կողմ թափ տալով պատասխանում է վար անողը:

Այծատերը կարծելով, թե դեպի ցույց տված կողմն են գնացել այծերը ասում է.

- Թող երկինքը վկա լինի, թե գտա այծերս, պոզը կոտրածը քեզ եմ տալու:

Ասում է և գնում այծերը որոնելու: Այծերը գտնելով՝ ուրախ - ուրախ առաջն արած, քշում բերում է արտավարի մոտ և ասում.

- Շնորհակալ եմ, ախպեր, այծերս գտա, առ այս այծն էլ քեզ, - ու պոզը կոտրած այծը քշում է դեպի նա:

- Ես չեմ կոտրել դրա պոզը, ես տեղեկություն չունեմ, զարմանալով ասում է արտավար խուլը:

- Ինչ ես խոսում, - ասում է այծատերը, - ես այս այծն եմ խոստացել, որ մեռնես մյուս այծերից տվողը չեմ:

- Չէ, ես չեմ կոտրել, բարկացած ասում է մեկը:

- Չէ, ես էս այծն եմ խոստացել, - կրկնում է մյուսը: Մա նրան, նա սրան, բանը հասնում է տուրուղմբոցի: Վերջն էլ գնում են քոխվի մոտ գանգատ: Գյուղը չհասած սրանց հանդիպում է մի պառավ կին, նույնպես խուլ և հարսի ձեռքից փախած:

- Ա՛յ նանի, - ասում է այծատերը, - իմ այծերը կորել էին, գնացի, էս մարդուն հարցրի, սա էլ այծերիս տեղը ցույց տվեց: Պոզը կոտրած այծս տալիս եմ սրան, չի վերցնում, ես էդ այծն եմ խոստացել, որ մեռնի էլ, մյուս այծերից տվողը չեմ:

- Այ նանի, - ասում է խուլ մարդը, - էս օտարականն եկել ասում է, թե այծիս պոզը դու ես ջարդել: Թող ձեռքս ջարդվի, թե ես էդ բանից տեղեկություն ունեմ:

- Է՛, որդիքս, ձեր արևն ապրի, պատասխանում է խուլ պառավը, - ինչ էլ ուզում է լինի, ես ձեր խնդիրը չեմ կարող կատարել, քանի որ են չարամիտ անզգամ հարսը տանն է, ես էն տունը ոտ կոխողը չեմ ու չեմ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Հեքիաթի դեպքերը հերթականությամբ թվարկի՛ր:
Խուլը կորցնում է այծը:
2. Նշի՛ր այն հատվածը, որը քեզ դուր եկավ:
3. Տեքստից դուրս գրի՛ր ի՞նչ հարցին պատասխանող բառեր և դարձրո՛ւ հոգնակի (շատացրու): *Օրինակ՝ այծ(ի՞նչ)-այծեր(ինչե՞ր)*

Ի՞նչ	Ինչե՞ր

4. Շարունակի՛ր հորինել.
Մի պառավ երեք խուլ այծ ուներ: Մի օր պառավը կորավ....

Էջի ձուն

Հայ ժողովրդական հեքիաթ

Մի հալիվոր գնում է քաղաք, տեսնում շուկայում ձմերուկ են վաճառում, մոտենում է, թե՛

- Ախպերացու, էս ի՞նչ է:

Ձմերուկ վաճառողը տեսնում է, որ էս ծերը միամիտ մարդ է, ձեռ է առնում.

- Էջի ձու:

Էս հալիվորը մտածում է, «Մեր էջը սատկել է, մի հատ առնեմ տանեմ, ի՞նչ կլինի»: Առնում է տանում: Ճամփին նստում է՝ մի քիչ հանգստանա, շունչը տեղը բերի, էս ձմերուկը գլորվում է, գնում մի քարի դիպչում, ջարդվում: Դու մի ասի, էդ քարի տակ մի նապաստակ է թաքնված լինում, դուրս է գալիս քարի տակից ու, պո՛ւկ, փախչում: Խեղճ հալիվորը ետևից վազում է ու ձայն տալիս.

- Քուռի՛ - քուռի՛, քուռի՛-քուռի՛...

Նապաստակը փախչում է գնում: Էս մարդը փոր-փոշման տուն է գնում, կնոջը պատմում.

- Բա, ա՛յ կնիկ, գլխիս էսպես փորձանք եկավ: Մի էջի ձու առա, ճամփին գլորվեց, քուռակը

դուրս եկավ, փախավ: Ինչքան վազեցի, չհասա: Էնպես էր վազում, ոնց որ՝ նապաստակ:
Ափսոս, կպահեիք, կմեծանար, ձմեռվա համար փայտ կբերեիք:

Կինն ասում է.

- Ա՛յ մարդ, հետո կթողնեի՞ր կժերը վրան դնեի, գնայի աղբյուրից ջուր բերելու:

Էս մարդը կնոջը մի լավ ծեծ է տալիս թե՛

- Ես գնամ խեղճ էշին փայտ բարձեմ-բերեմ, դու էլ հոգնած-դադրած էշին տանես ջո՞ւրը...

Հարցեր և առաջադրանքներ

1. Անհասկանալի բառերը [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Շարունակի՛ր նախադասությունները.

Մի հալիվոր գնում է քաղաք,

Դու մի ասի, էդ քարի տակ ...

Մի էշի ձու առա, ...

3. Ինչպիսի՞ մարդ էր հեքիաթի ծերունին:
4. Լրացրո՛ւ առածի բաց թողնված բառերը.

Էշի բեռն ինչքան _____ լինի, այնքան _____ կգնա:

5. Գտի՛ր էլի առածներ, ասացվածքներ, որոնք քո կարծիքով այս հեքիաթի համար են:
6. Հորինի՛ր.

«Էշի ականջում քնածը»

Շաշ հյուրը

Հայ ժողովրդական հեքիաթ

Մի անգամ մի մարդ հյուր է գնում ընկերոջ տուն: Ուտում է, խմում, իրիկնադեմին վեր է կենում, որ գնա տուն: Մեկ էլ նայում է տեսնում՝ երկինքը տրաքեց, ու մի անձրև սկսեց, ոնց որ ջրհեղեղ:

Պահո՛ւ, էս ի՞նչ փորձանք էր, ո՞նց եմ տուն գնալու,- ասում է էս հյուրը:

Տանտերը տեսնում է, որ էլ ճար չկա, ասում է.

Լավ, ա՛յ ընկեր, էս անձրևին ո՞նց ես գնալու տուն, գիշերը մեր տանը մնա, էլ ո՞ր օրվա ընկերն ենք:

Վերջը հյուրը համաձայնում է:

Տանտերն ու կինը գործով են ընկնում: Մեկ էլ նայում են տեսնում՝ հյուրը չկա:

Քիչ ժամանակ անց մեկ էլ հյուրը թրջված, ջուր դարձած, ներս մտավ:

- Ա՛յ մարդ, տունդ շինվի, էս անձրևին ո՞ւր էիր գնացել:

- Գնացի՝ տնեցիներին ասեմ, որ անձրևի պատճառով գիշերը ձեր տանն եմ մնալու:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձի՛ր բացատրել արտահայտությունները.

Երկինքը տրաքեց -

ճար չկա -

գործով են ընկնում -

ջուր դարձած -

2. Նշի՛ր այն նախադասությունը, որով կարող էս ապացուցել հյուրի շաշ լինելը:

3. Առած-ասացվածքները խառնվել են: Միացրո՛ւ համապատասխան հատվածները:

Ով աշխատի, իր խելքից է:

Ստի ոտը իրեն կանի:

Գդակը՝ մեծ, նա կուտի:

Ով ինչ անի, կարճ է:

Ինչ լինի մարդուն՝ տակը՝ դատարկ:

4. Նշված բառերով բարդ բառեր կազմի՛ր: *Օրինակ՝ տուն - առանձնատուն*

Հյուր -

Ջուր -

Ընկեր -

Մուկն ու ձուն

Մտեփան Չորյան

Մի անգամ մտա մեր մառանը, որ բահ վերցնեմ: Ոտս շեմից ներս դրի, թե չէ, նկատեցի մի խումբ մկների, որոնք շրջապատել էին հավի բույնը: Տեսա, որ մկներից մեկը մտել է հավի բույնը, իսկ մյուսները մեկնված, ձգված նայում են նրան ու սպասում: Մեկ էլ հավի բույնը բարձրացած մուկը, իր փոքրիկ թաթերով ձուն գրկած, գլորվեց մեջքի վրա, ընկավ մյուսների առաջ: Այստեղ միայն պարզ տեսա, որ նա ձուն դրել է փորին, երկու կողից բռնել թաթիկներով, իսկ բարակ ու երկար պոչը վրայից մեկնել, բռնել է բերանով այնպես, ինչպես

մի բան պարանով կապում են, որ չընկնի: Մկները շրջապատեցին նրան և ուրախ-ուրախ, նրա ոտներից, ականջներից քաշելով, տարան դեպի պատը, ուր իրենց բույնն էր: Ձուն բնի բերանը հասցնելով՝ նրանք ետ քաշվեցին: Ձուն բռնող մուկը զգուշությամբ թեքվեց կողքի, ձուն դրեց գետնին և թաթիկները բաց թողեց: Այդ ժամանակ արդեն մյուսները սկսեցին ձուն գլորել դեպի բույնը: Ձուն ընկավ պատի անցքի մեջ: Ձվի հետ անհետացան նաև մկները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմվածքից դուրս գրի՛ր անձանոթ բառերն ու [օնլայն բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ինչպե՞ս էր մուկը բռնել ձուն: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:
3. Քո կարծիքով, ի՞նչ էր ասում ձուն, երբ իրեն տանում էին:
4. Իսկ մկներն ի՞նչ էին ասում:
5. Ինչպե՞ս է կոչվում.

բառերի մատանը -

գրքերի մատանը -

նկարների մատանը -

6. Շարունակի՛ր.

Մկների երկիրը կոչվում է Մկստան:

Վախկոտների երկիրը կոչվում է

Կաղամբների երկիրը կոչվում է

Ծիծաղների երկիրը կոչվում է

7. Նախադասությունները համառոտի՛ր՝ թողնելով միայն ի՞նչը, ի՞նչ է անում հարցերին պատասխանող բառերը:

Ձուն ընկավ պատի անցքի մեջ:

Ձուն բռնող մուկը թեքվեց կողքի:

Մուկը փոքրիկ թաթիկներով ձուն գրկեց:

Ձյուն

Գեղամ Մարյան

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Զգո՛ւյշ իջի՛ր աշխարհին,
Ծաղիկները մտել են քուն,
Հողն է նրանց անկողին:

Հանդա՛րտ, կամա՛ց իջի՛ր այնպես՝
Ծաղիկները չարթնանան,
Ծածկի՛ր նրանց քնքուշ ու հեզ,
Զգո՛ւյշ, զգո՛ւյշ անսահման:

Ձյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, սպիտա՛կ ձյուն,
Հանգի՛ստ, խաղա՛ղ իջի՛ր վար,
Ծաղիկները մտել են քուն,
Ծաղիկները ցրտահար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բանաստեղծության կրկնվող տողերը նշի՛ր:
2. Ի՞նչն էր ծաղիկներ անկողինը:
3. Ինչպե՞ս պետք է ձյունը ծածկի ծաղիկներին: Նշի՛ր այդ տողերը:
4. Ձյան մասին հանելուկ հորինի՛ր:
5. Պատկերացրո՛ւ՝ հանդիպել ես մեկին, ով չգիտի, թե ինչ է ձյունը: Պատմի՛ր նրան ձյան մասին: Պատմի՛ր ծաղիկների մասին:
6. Նոր վերնագիր մտածի՛ր բանաստեղծության համար:

Հեքիաթ փշատերն ծառի մասին

Անտառի մի խորհրդավոր բացատում ապրում էր մի փշատերն ծառ: Անտառի ծառերից ոչ մեկը նրա հետ ընկերություն չէին անում: Գարնանը բոլոր ծառերը բողբոջում էին, տերևակալում, զարդարվում ծաղկաթերթերով, մեկը մյուսին զարմացնում իրենց ծաղիկների բուրմունքով, իսկ փոքրիկ փշատերնը զարմացած նայում էր, թե ինչպես էին բոլոր ծառերը պես-պես զգեստներ հագնում, սոսափում ու պարծենում իրենց գեղեցկությամբ...

Բայց երբ եկավ աշունը, նրանց տերևները թափվեցին, իսկ առաջին ձյան հետ նրանք մերկացան ու տխուր լռեցին: Միայն փոքրիկ փշատերնն էր, որ կանաչ ու դալար կանգնած էր մնացել...

Շուտով Նոր տարի էր... Անտառի բնակիչները պատրաստվում էին Նոր տարվան... Նրանք ուզում էին շատ գեղեցիկ դիմավորել Ձմեռ Պապիկին և որոշում են զարդարել փշատերևին: Ամեն մեկը տարբեր բաներ է բերում. սկյուռիկը բերում է ընկույզ և կաղին, ոգնին՝ չորացրած սնկեր, իսկ նապաստակը իր մայրիկից խնդրում է փոքրիկ գազարներ:

Շատ շուտով տոնածառը շքեղ տեսք է ստանում, գազանիկներն ուրախանում են, իսկ փշատերևը հուզված նայում է շուրջը: Նա երջանիկ էր, սակայն զգում էր, որ բոլոր ծառերը տխուր են:

Գիշերը, երբ բոլոր գազանիկները պառկում են քնելու, նա բվին խնդրում է, որ իր խաղալիքների կեսը տանի և կախի մյուս ծառերի ճյուղերից: Հաջորդ օրը երբ, Ձմեռ Պապը գալիս է անտառ, տեսնում է, որ բոլոր ծառերը գեղեցիկ զարդարված են: Նա զարմացած հարցնում է. «Իսկ ո՞վ է զարդարել անտառի մյուս ծառերը»: Փշատերևը համեստորեն լռում էր: Այդ ժամանակ բուն որոշեց ամեն ինչ պատմել Ձմեռ պապիկին: Ձմեռ պապը շոյեց փշատերևի դալար փշիկները և ուրախացած բացականչեց. «Այսօրվանից քեզ կկոչենք տոնածառ: Դու բոլորին տոն ես պարզել: Դու աշխարհի ամենաբարի ծառն ես»:

Հնչեցին Նոր տարվա զանգերը, երկնքում վառվեցին ամանորյա աստղիկները, փաթիլ-փաթիլ ձյուն եկավ, և անտառի բոլոր բնակիչներն ու ծառերը Ձմեռ պապի հետ դիմավորեցին Նոր տարին: Նրանք հասկացան, որ անտառում բոլորն էլ կարևոր են, որ պետք է սիրով ապրեն անտառում, որ ոչ մեկն անտառում չպետք է «քիթը վեր ցցի»...

Հարցեր և առաջադրանքներ

1. Բառարանի օգնությամբ բացատրի՛ր նշված բառերը:
2. Բարդ բառերը գունավորի՛ր կարմիրով:
3. Ի՞նչ էր կատարվում գարնանը մյուս ծառերի հետ: Նշի՛ր այն հատվածը, որտեղ դա երևում է:
4. Բնութագրի՛ր փշատերևին:

5. Ե՞րբ տխրեցին մյուս ծառերը:
6. Ի՞նչ է խնդրում փշատերևը բվին:
7. Երբ Ձմեռ պապն իմացավ փշատերևի գեղեցիկ արարքի մասին, ի՞նչ ասաց: Նշի՛ր Ձմեռ պապի խոսքը:
8. Համառոտի՛ր նախադասությունները՝ թողնելով միայն ի՞նչ և ի՞նչ է անում հարցերին պատասխանող բառերը:

Գարնանը բոլոր ծառերը բողբոջում էին:

Փոքրիկ փշատերևը կանաչ ու դալար կանգնած էր:

Գիշերային երկնքում վառվեցին ամանորյա աստղիկները:

9. Շարունակի՛ր ըստ օրինակի.

Օրինակ՝ զարմանք-զարմանալ

Ուրախ -

Տխուր -

Բողբոջ -

Կանաչ -

Չոր -

10. Տրված պարզ բառերից կազմի՛ր բարդ բառեր:

Տերև, ծաղիկ, ծառ, թերթիկ, փուշ, տոն

11. Տրված բառերն ու ածանցները միացնելով կազմի՛ր ածանցավոր բառեր: *Օրինակ՝ փոքր + իկ = փոքրիկ*

Ա. Փուշ, ուրախ, խորհուրդ

Բ. Ություն, իկ, ավոր

12. Լրացրո՛ւ բաց թողնված սյունակները.

Եզակի (մեկ)	Հոգնակի (շատ)
Անտառ	
	ծառեր
	փշիկներ
նապաստակ	
	գազանիկներ
սկյուռ	

13. Լրացրո՛ւ աղյուսակը՝ տրված բառերը տեղափոխելով համապատասխան սյունակում.

Անտառ, նայում է, տոնածառ, խորհրդավոր, բողբոջում էին, թափվում են, դալար, զարդարում էին, փշատերև, պատրաստվում էին, կանաչ, կաղին, գեղեցիկ, ընկույզ, հարցնում է, գիշեր, սկյուռ, փաթիլ, փոքրիկ, զարդարված է, տխուր

ի՞նչ	ի՞նչպիսի	ի՞նչ անել, ի՞նչ լինել

Եղևնին

Համո Մահյան

Անտառից եկած կանաչ եղևնին,
 Հիշում է կանաչ իր ընկերներին,
 Արահետներն է հիշում ձյունի տակ,
 Հիշում է բացատն ու բուքն սպիտակ:

Երկինքն է հիշում իր գլխի վերև,
 Եվ իր մայր անտառն ասեղնատերև,
 Հովերն է հիշում նա գարնանային,
 Որ իրեն այնպես օրորում էին:

Վաղորդյան ցողի գոհարն է հիշում,
 Եվ մայրամուտի թևերն արբեշում,
 Հիշում է սուսափն ամեն մի ծառի,
 Խարույկն է հիշում անտառապահի:

Հիշում է բոլորն ու չի փսոսում,
 Որ էլ անտառի երգը չի լսում,
 Ինչո՞ւ փսոսա, երբ իր թևերին
 Գարուն է բերել երեխաներին,
 Գարուն է բերել այս ձմռան օրով

Եվ տուն է մտել կանաչ շորերով.
 Ե՞րբ է նա այսպես զուգվել, զարդարվել
 Եվ մարդկանց այսքան հրճվանք պատճառել,
 Ե՞րբ է նա եղել այսքան երջանիկ
 Ու ե՞րբ է տեսել այսքան խաղալիք:
 Ե՞րբ են նրա մոտ այսքան մանուկներ
 Երգել ու պարել մինչև ուշ գիշեր...
 Ջարդարանքներով, աստղերով իր պերճ
 Կանգնել է ուրախ մանուկների մեջ,
 Այնպես հպարտ է նայում աշխարհին,
 Կարծես հենց ինքն է բերել Նոր տարին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Անհասկանալի բառերը դո՛ւրս գրիր և [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Ի՞նչ էր հիշում եղևնին: Պատմի՛ր եղևնու անունից:
3. Եղևնին ի՞նչ էր զգում անտառից հեռու:
4. Նա ավստո՞ւմ էր, որ այլևս անտառում չի:
5. Ինչո՞ւ էր նա հպարտ նայում աշխարհին:
6. Նամակ գրի՛ր եղևնուն:

Երբ մտքերը սառչում են օդում

Ալբերտ Մորավիա

(1-ին մաս)

Պիտի որ իմանաք, մեզանից միլիոնավոր տարիներ առաջ **Բևեռում** շատ ավելի ցուրտ էր, քան այսօր: Ջերմաստիճանը միլիարդ աստիճան զրոյից ցածր էր, և ամեն ինչ սառչում էր, նույնիսկ՝ մտքերը: Բավական էր մեկը մտածել. «Ցուրտ է, գրո՛ղը տանի» անմիջապես նրա գլխավերևում սուր սառցալույաներով գրվում էր. «Ցուրտ է, գրո՛ղը տանի»:
 Հենց այդ պատճառով Բևեռում ոչ ոք չէր համարձակվում մտածել: Բոլորն էլ վախենում էին, որ ուրիշները կկարդան իրենց մտքերը:
 Այսպես արջերը, պինգվինները, փոկերը, մարդիկ՝ բոլորը դադարել էին որևէ բան մտածել:
 Մի խոսքով, Բևեռը դարձել էր իսկական հիմարիկների մի աշխարհ:
 Դարերից մի դար (երբ ժամանակը դարերով էին հաշվում), մի **Օով Ա. Ցուլ** անշարժ պառկած

սառցակտորի վրա, **կիսախուփ** աչքերով վայելում էր ցուրտը:

Նրա գլխում ոչ մի միտք չկար, բացի մի կարճ «Բա՛»-ից: Հենց այդ «Բա՛»-ն էլ սառցե տառերով կախված էր նրա գլխավերևում: Թե ի՞նչ էր ուզում ասել այդ «Բա՛»-ով՝ պարզ չէ:

Հանկարծ ջրից դուրս ցցվեց **Օձ Ա. Ձուկն** ու, պոչը խաղացնելով, կանչեց.

- Հե՛յ, Ծով Ա. Ցուկ, լսիր ի՞նչ եմ ասում:

- Ասա՛, լսում եմ,- փնթփնթաց Ծով Ա. Ցուկը:

- Ես մի երկրում եղա, որը կոչվում էր **Արևադարձ**: Ա՛յ թե շոգ էր այնտեղ: Եվ գիտե՞ս, այդ երկրում մտքերը չեն սառչում:

- Ի՞նչ ես ասում:

- Հավատա: Ա՛յ, օրինակ՝ մեկը քեզ է նայում ու մտածում.«Բայց ի՞նչ հաստիկ է այս Ծով Ա.Ցուկը, հա՛...», իսկ դու դա չես էլ իմանում, որովհետև այնտեղ մտքերը չեն սառչում ու մնում են անտեսանելի:

- Այդ ո՞վ է ասում, որ ես հաստիկ եմ,- նեղացած փնթփնթաց Ծով Ա. Ցուկը:

- Օրինակի համար եմ ասում: Լսի՛ր, արի գլուխներս առնենք-կորչենք Բևեռից: Թե իմանաս, ին՛չ հաճելի է. մտածիր՝ ին՛չ ուզում ես: Այդ Արևադարձում ես մի կու՛շտ մտածեցի:

- Ի՞նչ էիր մտածում:

- Տարբեր բաներ:

- Օրինակ:

- Ինչ ուզես: Օրինակ՝ մտածում էի, որ արևը կանաչ է: Կամ՝ երկու անգամ երկու հավասար է հինգի:

- Հա, բայց արևը կանաչ չէ: Իսկ երկու անգամ երկուսը հավասար է չորսի:

- Ճիշտ ես ասում: Բայց հրաշալիին էլ հենց դա է, որ կարող ես մտածել՝ ինչ ուզես, ու ոչ ոք չի իմանա:

Օձ Ա. Ձուկն այնքան խոսեց ու համոզեց, որ Ծով Ա. Ցուկը համաձայնեց գնալ Արևադարձ կոչվող երկիրը:

Օձ Ա.Ձուկը լողաց առջևից, իսկ Ծով Ա. Ցուկը հետևեց նրան: Լողացին, լողացին, ջերմաստիճանը միլիարդ աստիճան ցրտությունից փոխվեց միլիարդ աստիճան տաքության: Աստված իմ, ի՛նչ շոգ էր: Ծովը եռում էր, ինչպես ջուրը կաթսայում:

Ծով Ա. Ցուկը դեռ ոչինչ չէր մտածում: Միլիոնավոր տարիներ նա չէր մտածել. հիմա էլ կարծես քնած էր: Լողալիս մեկ-մեկ հարցնում էր.

- Օձ Ա. Ձուկ, դու արդեն մտածո՞ւմ ես:

- Իհարկե:

- Իսկ ի՞նչ ես մտածում:

- Հազար ու մի բան ու բոլորը քո մասին:

- Ի՞նչ ես մտածում իմ մասին:

- Է՛, չեմ ասի, ասեմ՝ կնեղանաս:

Ծով Ա. Ցուկը տխրեց: Բևեռում ոչ ոք ոչ մեկի մասին չէր մտածում: Աստված գիտի, թե Օձ Ա.

Ձուկը հիմա իր մասին ինչեր է մտածում: Բամբասկոտ, բութ, երկերեսանի արարած:

Հանկարծ Ծով Ա. Յուլը նկատեց, որ ինքն էլ Օձ Ա. Ձկան մասին է վատ բաներ մտածում: Այստեղ բոլորն իրեն միայն լավ բաներ են ասում. «Բարի գալուստ, ի՛նչ գեղեցիկ ես, ի՛նչ իմաստուն* տեսք ունես, ի՛նչ բեղեր են...»: Բայց Ծով Ա. Յուլը համոզված էր, որ եթե Բնեռում լինեին, օդում սառցե տառերով գրված կլիներ. «Միայն դու էիր պակաս այստեղ, անճոռնի. Ա՛յ քեզ մոռութ, մի սրա բեղերին նայեք...»:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշված բառերն առանձնացրո՛ւ և [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Փորձի՛ր բացատրել, թե ինչպես ես հասկանում՝
3. ա. գլուխներս առնենք - կորչենք -
բ. կուշտ մտածել -
4. Ըստ այս պատմության ինչպիսի՞ն էր Բնեռը միլիոն տարի առաջ:
5. Իսկ Արևադարձը ինչպիսի՞ն էր միլիոն տարի առաջ:
6. Քո կարծիքով ի՞նչ է միտքը:
7. Ի՞նչ կլիներ, եթե մարդիկ մոռանային մտածել:
8. Նշի՛ր «կրկնվող» բառը:
Ծովացույ, ծովային, ծովափ, ծովեզր, ծովախոզուկ, ծովափիղ, ծովակ:
9. Ամեն անգամ նախորդ բառի մի տառը փոխելով՝ ստացի՛ր. ծով-ից հավ
10. Հորինի՛ր. «Սառնարանում ապրող մտքերը»

Երբ մտքերը սառչում են օդում

Ալբերտ Մորավիա

(2-րդ մաս)

Մի օր Ծով Ա. Յուլը Ա. Ֆրիկացի անունով մի սևամորթի տեսավ, որն իր կնոջ հետ նավակում նստած Օձ Ա. Ձկան համար երգ էր երգում: Օձ Ա. Ձուկը բերանը բաց լսում էր:

Օձ Ա. Ձուկ,

Օձ Ա. Ձուկ,

Չկա քեզ պես

Միրուն ձուկ:

Օձ Ա. Ձուկն այդ երգով հրապուրված՝ մի պահ մոտացել էր, որ Արևադարձ կոչվող երկրում մի բան ասում են, մի այլ բան մտածում: Նա մոտեցավ նավակին, իսկ Ա. Ֆրիկացին ճարպկորեն նետեց ուռկանն, ու մի ակնթարթում բռնեց Օձ Ա. Ձկանը: Քիչ անց Օձ Ա. Ձուկը

արդեն տապակված էր ու խժռված:

Ծով Ա. Ցուլը դա որ տեսավ, սարսափեց: Նա հեռացավ, մտածելով. «Ի՞նչ սարսափելի է, կեցցենք մենք՝ բևեռցիներս, որ ոչինչ չենք մտածում, իսկ եթե մտածում ենք՝ բոլորը կարող են տեսնել մեր մտածածը»:

Բայց Ծով Ա. Ցուլն անմիջապես չվերադարձավ Բևեռ: Գուցե՞ ծուլությունն էր պատճառը. կամ էլ նրան դուր էր գալիս չկարդացվող մտքեր ունենալը:

Այսպես, Ծով Ա. Ցուլը մնաց Արևադարձ կոչվող երկրում և ընտելացավ այդ երկրի սովորություններին:

Մտածելը անսպասելի պտուղներ տվեց:

Ծով Ա. Ցուլը սկսեց շատ խորիմաստ բաներ մտածել, ասենք. «Ո՞վ ենք մենք: Որտեղի՞ց ենք գալիս: Ո՞ւր ենք գնում»:

Ահա և պատասխանները. «Մենք ծովացուլեր ենք: Գալիս ենք բևեռից: Կանք, որովհետև մեզ ստեղծել է մի էակ, որը հսկայական ծովացուլի է նման: Վերջիվերջո կհեռանանք Արևադարձ կոչվող այս կեղծ երկրից և կվերադառնանք ազնիվ ու ճշմարիտ Բևեռ»: Ի վերջո Ծով Ա. Ցուլը ձանձրացավ մի բան մտածել, բայց ուրիշ բան անելուց և մի գեղեցիկ օր վերադարձավ Բևեռ: «Այո՛, չմտածել, անգործ ու անհոգ ապրել գոնե մի միլիոն տարի», - երազում էր նա:

Մի անգամ Բևեռում, իր հին սառցակտորին թիկնած, Ծով Ա. Ցուլն զգաց, որ մտածելն արդեն սովորություն է դարձել, և ինքը չի կարողանում չմտածել:

Դժբախտաբար բոլոր մտքերն անմիջապես հայտնվում էին գլխավերևում՝ պսպղուն ու թափանցիկ սառցալույաներով գրված: Խեղճ Ծով Ա. Ցուլի բարեկամներն սկսեցին նրանից փախչել: Նա էլ սկսեց վատ բաներ մտածել նրանց մասին: Այդ մտքերը վատ խոսքերով սառցալույաներ դարձան...

Շուտով Ծով Ա. Ցուլը մեն-մենակ մնաց իր սառցակտորի վրա:

Այդ ժամանակներից շա՛տ-շա՛տ տարիներ են անցել: Բևեռում ջերմաստիճանը բարձրացել է: Մտքերն այլևս չեն սառչում և դարձել են անտեսանելի: Բայց Ծով Ա. Ցուլը դարձյալ մենակ է ապրում: Իր սառցակտորին պառկած՝ նա անվերջ մտածում է: Ի՞նչ է մտածում:

Ի՞նչ իմանաս:

Հարցեր և առաջադրանքներ

1. Պատմի՛ր այս պատմության Ծով Ա. Ցուլի մասին:

ա. երբ նա Բևեռում էր ապրում

բ. երբ նա Արևադարձում էր ապրում

2. Ի՞նչ էս կարծում, լա՞վ է, երբ մարդիկ կարողանում են կարդալ քո մտքերը:

3. Ի՞նչ խորհուրդ կտաս՝

ա. Բևեռի բնակիչներին

բ. Արևադարձի բնակիչներին

4. Գտի՛ր «կրկնվող» բառը:

Արևադարձ, արևայրուք, արևային, արևոտ, արևածաղիկ, արևածագ:

5. Գտի՛ր տրված բառերի հոմանիշները.

Սիրուն -

ակնթարթ -

հսկա -

անմիջապես -

արև -

6. Հորինի՛ր.

«Միլիոն տարի մեզանից հետո»

Կույրերի կարծիքը

Հովհաննես Թումանյան

Օրը ցերեկով

Երեք-չորս հոգով

Կույրերը եկան

Փղին դեմ ընկան:

Մինը, որ մարմնին դիպավ հաստ, ահեղ,

- Հե՛յ, զգո՛ւյշ, կանչեց, մի պատ կա էստեղ:

Մյուսը, որ ոտն էր շոշափել իր դեմ՝

- Ի՛նչ պատ, ծիծաղեց, էս կոճղ է կարծեմ:

Երրորդի ձեռը կնճիթն էր ընկել.

- Օձ է, օձ, գոռաց, էլ ի՛նչ էք կանգնել:

Մինչդեռ չորրորդը պոչիցը բռնած

Քահ-քահ խնդալով ծաղրում էր նրանց.

-Վա՛հ, ճիշտ որ կույր էք. չիմացավ ոչ ոք:

Ոչ էս է, ոչ էն, այլ կախած մի թոկ:

Չէ՛, պատ է,- չէ, կոճղ- չէ, օձ է,- չէ, թոկ...

Ու աղմկելով ամեն մինը ջոկ,

Ինչպես որ եկել

Դեմ էին ընկել,
Էնպես էլ կույր-կույր ետ դարձան կրկին-
Սարի պես փիղը պարզ լուսի տակին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Առակը համառոտ պատմի՛ր:
2. Ի՞նչ է սովորեցում առակը:
3. Նամակ գրի՛ր հերոսներին. նրանց խորհուրդ տուր:
4. Ինչ կպատահեր, եթե կույրերը փղի փոխարեն սիրամարգի հանդիպեին:
5. Շարունակի՛ր ըստ օրինակի.

Երկու – երկրորդ

Երեք –

Ութ –

Չորս –

Վեց –

Յոթ –

Մեկ –

Խոսող ձուկը

Հովհաննես Թումանյան

Լինում է, չի լինում մի աղքատ մարդ: Էս աղքատ մարդը գնում է դառնում մի ձկնորսի շալակատար: Օրական մի քանի ձուկ է աշխատում, տուն բերում, նրանով ապրում են ինքն ու կինը:

Մի անգամ էլ ձկնորսը մի սիրուն ձուկ է բռնում, տալիս իր շալակատարին, որ պահի, ինքն էլ ետ ջուրն է մտնում: Էս շալակատարը գետափին նստած՝ նայում է նայում էն սիրուն ձկանն ու միտք անում.

- Տեր աստված,- ասում է,- սա էլ, որ մեզ նման շունչ կենդանի է, դու ասա՝ սա՞ էլ մեզ նման ծնող ունի, ընկեր ունի, աշխարհքից բան է հասկանում, ուրախություն կամ ցավ է զգում՝ թե չէ...

Հենց էս մտածելու ժամանակ ձուկը լեզու է առնում.

- Լսի , - ասում է,- մարդ-ախպեր: Ընկերներիս հետ ես խաղում էի գետի ալիքների մեջ: Ուրախությունից ինձ մոռացա ու անզգույշ ընկա ձկնորսի ուռկանը: Հիմի, ով գիտի, իմ ծնողն ինձ որոնում է ու լաց է լինում, հիմի ընկերներս տխրել են: Ես էլ, տեսնում ես, ինչպես եմ տանջվում, շունչս կտրում է ջրից դուրս: Ուզում եմ էլ ետ գնամ ապրեմ ու խաղ անեմ նրանց հետ էն պաղ ու պարզ ջրերում: Էնպես եմ ուզում, էնպես եմ ուզո՞ւմ... Եկ խեղճ արի, ազատ արա ինձ, բա՛ց թող, բա՛ց թող գնամ...

Էսպես էր ասում ցա՛ծ, շատ ցա՛ծ ձենով, ցամաքած բերանը թաց ու խուփ անելով:

Էս շալակատարի մեղքը գալիս է, առնում է ետ գցում գետը:

- Գնա, սիրուն ձկնիկ, թող լաց չլինի քո ծնողը: Թող չտխրեն քո ընկերները: Գնա ապրի ու խաղ արա նրանց հետ:

Ձկնորսը սաստիկ բարկանում է շալակատարի վրա:

- Տո՛ւ ախմախ,- ասում է,- էստեղ ջրի մեջ թրջվելով ձուկն եմ բռնում, դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ ջուրը գցո՞ւմ... Դե գնա կորի, էլ իմ աչքին չերևաս, էլ իմ շալակատարը չես էս օրից, գնա սովից մեռի:

Ձեռի տոպրակն էլ խլում է ու ճամփու դնում:

- Հիմի ես ո՞ւր գնամ, ի՞նչ անեմ, ո՞նց ապրեմ...- տարակուսած մտածելով դառն ու դատարկ վերադառնում է աղքատը դեպի տուն:

Էս տխուր մտածմունքի ժամանակ ճամփին դեմը դուրս է գալի մի մարդակերպ Հրեշ՝ առաջը մի գեղեցիկ կով:

- Բարի օր, ախպերացու, էդ ի՞նչ ես մոլորել, ի՞նչ ես միտք անում,- հարցնում է Հրեշը:

Աղքատը պատմում է իր գլխին եկածը, թե ինչպես հիմի մնացել է անգործ, անճար ու չի իմանում, թե ոնց պետք է ապրեն ինքն ու իր կինը:

«Լսի՛, բարեկամ,- ասում է՝ Հրեշը: -Էս կաթնատու կովը ես քեզ կտամ երեք տարվան ժամանակով: Ամեն օր էնքան կաթը տա, որ քու կնիկդ ու դու կուշտ-կուշտ ուտեք, ապրեք: Երեք տարին լրացավ թե չէ, հենց էն գիշերը կգամ ձեզ հարց կտամ: Թե հարցիս պատասխանեցիք՝ իմ կովը ձեզ լինի, թե չէ՝ երկուսդ էլ իմն եք, տանելու եմ, ինչ ուզեմ կանեմ: Համաձայն ե՞ս:

- Մի բան՝ որ առանց էն էլ սովից մեռնելու ենք,- մտածում է աղքատը,- կովը կտանեմ, էս երեք տարին կապրենք, մինչև երեք տարվա լրանալն էլ աստված ողորմած է: Մի տեղից մի դուռ կբացվի, կամ գուցե հենց պատասխանը տալիս ենք, ով գիտի...

- Համաձայն եմ,- ասում է, ու կովն առաջն անում, տանում տուն:

Երեք տարի կյանք էն, լիովի ուտում, ապրում: Չեն էլ նկատում, թե ինչպես անցավ երեք տարին, և ահա հասնում է նշանակա՞ծ օրը, որ հրեշն էն գիշեր պիտի գա:

Մարդ ու կնիկ վերջալույսի տակ տխուր նստում են դռանը ու միտք են անում, թե ինչ պատասխան տան հրեշին կամ ով գիտի՝ ինչ կհարցնի նա. ո՞վ կիմանա Հրեշի միտքը:

- Ա՛յ թե ինչ դուրս կգա, երբ մարդ Հրեշի հետ գործ բռնի... հրեշի հետ հաշիվ ունենա... հրեշից լավություն ընդունի...- հառաչելով զոջում էին մարդ ու կին, բայց անցկացածն անց էր կացել, էլ հնար չկար: Իսկ զարհուրելի գիշերն արդեն վրա էր հասնում:

Էս ժամանակ նրանց մոտենում է մի անձանոթ գեղեցիկ երիտասարդ:

- Բարի իրիկուն,- ասում է,- ճամփորդ մարդ եմ. մութն ընկնում է, ես էլ հոգնած եմ, հյուր չե՞ք ընդունի՞ ձեր տանն էս գիշեր:

- Ընչի չէ, ճամփորդ ախպեր, հյուրն աստծունն է: Բայց մեզ մոտ վտանգավոր է էս գիշեր: Մենք հրեշից մի կով ենք առել էն պայմանով, որ երեք տարի կյանք, ուտենք, երեք տարուց ետը գա մեզ հարց տա, թե պատասխանենք, կովը մեզ լինի, թե չէ՝ իր գերին ենք: Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր պիտի գա, մենք էլ չգիտենք, թե ինչ պատասխան տանք: Հիմի մեզ ինչ անի մենք ենք մեղավոր, վայ թե քեզ էլ վնասի:

- Բան չկա, որտեղ դուք՝ էնտեղ էլ ես, պատասխանում է օտարականը:

Համաձայնում են. հյուրը մնում է:

Մին էլ կեսգիշերին դուռը դղրդում է: Ո՞վ է.- Հրեշը: Եկել էմ որ եկել էմ, դե պատասխանս տվեք: - Ինչ պատասխան, սարսափից մարդ ու կնկա լեզուն կապվում է, մնում են տեղները քարացած:

- Մի՛ վախենաք, էս ձեր տեղակ սրա պատասխանը կտամ,- ասում է երիտասարդ հյուրը ու գնում է դեպի դուռը:

- Եկել ե՛մ,- դռան ետևից ձայն է տալիս Հրեշը:

- Ես էլ եմ եկե՛լ,- պատասխանում է ներսից հյուրը:

- Որտեղի՞ց ես եկել:

- Ծովի էն ափից:

- Ընչո՞վ ես եկել:

- Կաղ մոծակը թամբել եմ, վրեն նստել եմ, եկել:

- Ուրեմն ծովը պատիկ է եղել:

- Ի՛նչ պատիկ, արծիվը չի կարող մի ավից մյուսը թռչի:
- Ուրեմն արծիվը ճուտ է եղել:
- Ի՞նչ ճուտ, թևերի շվաքը քաղաք է ծածկում:
- Ուրեմն քաղաքը շատ է փոքրիկ:
- Ի՛նչ փոքրիկ, նապաստակը մի ծայրից մյուսը չի հասնի:
- Ուրեմն նապաստակը ձագ է:
- Ի՛նչ ձագ. մորթին մի մարդու քուրք դուրս կգա, գլխարկն ու տրեխն էլ ավել:
- Ուրեմն մարդը թզուկ է:
- Ի՛նչ թզուկ, ծնկան ծերին արլորը ծուղրուղու կանչի, ձենը ականջը չի հասնի:
- Ուրեմն խուլ է:
- Ի՛նչ խուլ, սարում որ պախրեն խոտ պոկի, նա կլսի: Հրեշը մնում է կապված, մոլորված. զգում է, որ ներսը մի ուժ կա իմաստուն, համարձակ, անհաղթելի, էլ չի իմանում ինչ ասի, սուս ու փուս քաշվում, կորչում է գիշերվա խավարի մեջ:

Սրանք նոր մեռած տեղներիցը ետ են գալի, ուրախանում աշխարհքովը մին են լինում: Հետն էլ բացվում է բարի լուսը, և երիտասարդ հյուրը վեր է կենում, մնաք բարով է ասում, որ գնա իր ճանապարհը:

- Չենք թողնի, որ չենք թողնի,- առաջը կտրում են մարդ ու կին.- դու որ փրկեցիր մեր կյանքը, ասա՛, ինչով ետ վճարենք քո լավությունը...
- Չէ՛, անկարելի բան է, պետք է գնամ իմ ճանապարհը:
- Դե գոնե անունդ ասա, եթե լավությունդ կորչի ու չկարողանանք ետ վճար՛ել, գոնե իմանանք, թե ում ենք օրհնելու...
- Լավությունն արա ու թեկուզ ջուրը զցի, չի կորչի: Ես հենց են Խոսող ձուկն եմ, որի կյանքը դու խնայեցիր...- ասում է անձանթն ու չքանում ապշած մարդ ու կնկա աչքերից:

Հարցեր և առաջադրանքներ

1. Անձանթ բառերը դո՛ւրս գրիր և [բառարանի](#) օգնությամբ բացատրի՛ր:
2. Թվարկի՛ր հեքիաթի հերոսներին և յուրաքանչյուրին մեկ բառով բնութագրի՛ր:
 1. Ի՞նչ է ասում ձուկը շալակատարին: Նշի՛ր այդ հատվածը:
 2. Ինչպիսի՞ն էր ձուկը:

3. Իսկ շալակատարը ինչպիսի՞ մարդ էր:
4. Նշի՛ր վերջալույսը նկարագրող հատվածը, paint նկարչական ծրագրով նկարի՛ր այն և տեղադրի՛ր բլոգումդ:
5. Հեքիաթը ձկան անունից համառոտ պատմի՛ր:
6. Նամակ գրի՛ր ձկանը:

Ձախորդ Փանոսը

Հովհաննես Թումանյան

Ժամանակով մի աղքատ մարդ է լինում, անունը Փանոս: Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է՝ ձախ է գնում: Դրա համար էլ անունը դնում են Ձախորդ Փանոս: Ունեցած-չունեցածը մի լուծ եզն է լինում, մի սել ու մի կացին: Մի օր եզները սելում լծում է, կացինը առնում գնում անտառը փետի: Անտառում էս Փանոսը միտք է անում, թե՛ մի բան որ ծառը կտրելուց ետը մին էլ նեղություն պետք է քաշեն՝ ահագին գերանը գետնից բարձրացնեն գցեմ սելի մեջը, ավելի լավ է՝ հենց սելը լծած բերեն ծառի տակին կանգնեցնեն, որ ծառը կտրեն թե չէ, ընկնի մեջը:

Ասածն արած է:

Եզներով սելը բերում է մի մեծ ծառի ներքև կանգնեցնում, ինքը անցնում է վերի կողմը, կացինը քաշում՝ թրխկ, հա թրխկ: Շատ է քաշում թե քիչ, էդ էլ ինքը կիմանա, ծառը ճռճռալով գալիս է զարկում, տակովն անում սելը ջարդում, եզներն էլ հետը: Փանոսը մնում է ապշած կանգնած: Ի՞նչ պետք է անի: Կացինը վերցնում է ու ծոծրակը քորելով ճամփա է ընկնում դեպի տուն:

Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում: Տեսնում է մեջը վայրի բաղեր են լողում: Ասում է՝ գլուխը քարը, չեղավ չեղավ, արի գոնե մի բաղ սպանեն, տանեմ տամ կնկանս: Ասում է ու կացինը պտտում, շպրտում դեպի բաղերը, որ մինն սպանի, բաղերը ճղճղալով ցրվում են, փախչում են, որը եղեգնուտն է մտնում, որը թռչում գնում, կացինն էլ ընկնում է լճի խոր տեղը, տակն անում, կորչում: Փանոսը մնում է լճի ափին կանգնած միտք անելիս: Ի՞նչ անի, ի՞նչ չանի: Շորերը հանում է դնում լճի ափին, ինքը մտնում մեջը, որ կացինը հանի: Գնում է, գնում, քանի առաջ է գնում, ջուրն էնքան խորանում է, տեսնում է կարող է խեղդվել, ետ է դառնում, դուրս գալի:

Դու մի՛ ասիլ՝ Փանոսը որ լիճն է մտնում ու խորը գնում, էդ ժամանակ լճափով մի անցկենող է լինում, տեսնում է էստեղ թափած շորեր կան, եղեգնուտի մեջ խորը գնացած Փանոսին էլ չի նկատում, էս շորերը հավաքում է, առնում գնում:

Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա: Մնում է տկլոր կանգնած:

Միտք է անում. «Ի՞նչ անեմ, տեր աստված, էսպես տկլոր ո՞ր գնամ»:

Սպասում է մինչև մութն ընկնի: Մթան հետ վեր է կենում գնում գյուղը: Որ գյուղին մոտենում է, ասում է՝ էսպես տկլոր որ գնամ մեր տունը, տանըցիք ի՞նչ կասեն: Արի գնամ ախպորիցս

շոր առնեն հագնեն՝ էնպես գնամ կնկանս մոտ:

Ճամփեն ծռում է դեպի ախպոր տունը:

Դո՛ւ. մի ասիլ՝ էդ գիշեր էլ ախպոր մոտ մեծարք կա, քեֆի էլ էն տաք ժամանակն է: Դուռը ծերպ է անում, տեսնի ով կա, ով չկա, հյուրերից մինը կարծում է, թե շունն է, ձեռի կրծած ոսկորը շարտում է դեպի դուռը, ոսկորը դիպչում է աչքին, աչքը հանում:

Փանոսը ցավից վայ՝ վայ անելով ետ է դառնում, շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, ohո՛, մթնումը հրես մի տկլոր օքմին, ու չորս կողմից վրա են տալիս: Շների հաչոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները ետևից:

Առանց երկար ու բարակ մտածելու վճռում են, որ կա թե չկա սա սատանա է:

Բավական տեղ դըչըղու տալով, հայհոյելով, հարայ-հրոցով ընկնում են ետևից, հալածում, տանում գցում անտառները:

Շներն էլ ետևիցը մի ճուռը պոկում են, ու էսպես տկլոր, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Մյուս օրը գյուղում տարածվում է, թե հապա չեք ասիլ՝ «Փանոսը կորել է: Գնացել է անտառը փետի ու ետ չի եկել»: Գեղահավան հավաքվում են գնում, գնում են անտառը ման գալի, սելն ու եզները գտնում են ծառի տակին ջարդված, ինքը չկա:

Դես Փանոս, դեն Փանոս. հարց ու փորձով հագուստն էլ գտնում են մեկի մոտ:

- Ա՛յ մարդ, էս հագուստը ո՞րտեղից է ընկել քեզ մոտ:

- Թե՛ ախպեր, էս հագուստը էսպես մի լճի ափին վեր ածած էր, հավաքեցի բերի:

Գնում են լճի չորս կողմը պտտում, կանչում՝ «Փանո՛ւ, Փանո՛ւ», Փանոսը չկա:

Վճռում են որ Փանոսը խեղդվել է:

Գալիս են ժամ ու պատարագ են անում, քելեխը տալիս: Կնիկն էլ մի քիչ սուզ է անում, Փանոսին գովում, ափսոսում, հետո մի ուրիշ մարդ է ուզում, հետը պսակվում գնում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Փորձի՛ր բացատրել:

գործը ձախ գնալ -

միտք անել -

ձենի վրա վեր են կենում -

տակն անել -

ճամփան ծռել -

քեֆի տաք ժամանակն է -

վրա տալ -

մթան հետ -

զլուխը քարը -

դես Փանոս, դեն Փանոս -

2. Տեքստում այս նախադասությունները գտի՛ր և ավարտի՛ր:

Ինքը մի բարի մարդ է լինում ... :

Շատ է քաշում, թե՛ քիչ ... :

Ասում է՝ գլուխը քարը ... :

Դու մի ասիլ՝ եղ գիշեր էլ ... :

3. Ա և Բ շարքերում գտի՛ր հոմանիշ բառազույգեր:

Ա. Ժամ, տկլոր, վճռել, պսակվել, եղբայր

Բ. Որոշել, ախպեր, ամուսնանալ, եկեղեցի, մերկ

4. Ձախորդ Փանոսին նամակ գրի՛ր:

Չարի վերջը

Հովհաննես Թումանյան

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փչակ,
Փչակում մի բուն,

Բնում երեք ձագ,
Ու վրեն Կրկուն:
- Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուներ,
Ե՛րբ պիտի դուք առնեք թներ,
Թռչե՛ք, գնաք,

Ուրախանաք...

Երգում էր մարիկ Կկուն.
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ.
- Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն:
Ախ դու Կկու, հիմա՛ր Կկու,

Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
- Երեք հատ ձագ, աղա Աղվես:
- Երեք հատ ձագ ցույց կտամ քեզ:

Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա դկես ինձ մոտ:

Ձգի շուտով մի հատը ցած,
Թե չե՛ կացինս հրեն սրած,
Գնամ քերեմ,
Ծառը կտրեմ...
- Վա՛յ, չկտրես,

Աստված սիրես,
Էս մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե եղպես
Մի ջնջիլ մեզ

Բնով - տեղով,
Ամբողջ ցեղով:

Խնորեց մարիկ Կկուն ու ձագերից մինը
ձգեց ներքև:
Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց:
- Վայ - վա՛յ, դու - դո՛ւ,

Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,

Ո՞ր թփի տակ
Կորար մենակ...

- Վայ - վա՛յ, դու - դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն, մին էլ, ըհը՛,
Աղվեսը ետ եկավ:
- Էս սարը իմն է,

Էս ծառը իմն է,
Ծառում փչակ կա,
Փչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել **թաքուն**:

Ախ դու Կկու, **հիմար** Կկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու:
- Երկու հատ ձագ, աղա Աղվես:
- Երկու հատ ձագ ցույց կտամ քեզ:
Ա՛խ, չարամիտ դու ավազակ,

Ի՛նչ խաբար է, երկո՛ւ հատ ձագ.
Ի՛նչ, ուզում էս էստեղ գոռով
Լցնես ամբողջ կկուներո՞վ...
Ձգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հրեն սրած,

Գնամ բերեմ,
Ծառը կտրեմ...
- Վա՛յ, չկտրես,
- Աստված սիրես,
- Էս էլ առ տար,

Ու թող դադար՝
Վերջինը գեթ
Մնա ինձ հետ...
Աղաչեց մարիկ Կկուն ու երկրորդ ձագն էլ
ձգեց ներքև:
Աղվեսը՝ հա՛փ, էս էլ առավ ու գնաց:
- Վայ - վա՛յ, վույ - վո՛ւյ,
Ընչի՞ համար

Եկա ես սար,
Բուն շինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն եկավ,
Տարավ, կերավ,
Երկու, երկու,
Կուկու... կուկու...
Լաց էր լինում մարիկ Կկուն:

Էս միջոցին - դա՛, դա՛, դա՛, Ագռավն անց
էր կենում

Էն կողմերով: Լսեց Կկվի լացի ձայնը:

- Էդպես **սխտր** ու զարհուրիկ
Ի՞նչ էս լալիս, Կկու քուրիկ:
- Ինչպես չլամ, ա՛ սանամեր.

Աղվեսն եկավ էն սրտամեռ,
Գլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներըս տարավ, կերավ:

- Վո՛ւյ իմ աչքին, անխելք Կրկու,
Ինչպես իզուր խաբվել էս դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի:
Ոն՛ց թե սարը իմն է՝ կասի:
Ո՞վ է տըվել էն լրբին սար.

Սարն ամենքիս է հավասար...
Ո՞վ կթողնի վեր կենա նա
Ամբողջ սարին գա տիրանա,

Անունը տա սրած կացնի,
Սրան-նրան սուտ վախեցնի,
Ու մինն էսօր, մյուսը - երեկ,
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...

Մն գրողի էն տարածին
Ո՞վ է տվել սրած կացին:

Մին էլ որ գա ու **սպառնա**,

Մի՛ **վախենա**, քշի գնա:

Էսպես ասավ Ագռավն ու թռավ գրնաց:

Ահա կրկին

Աղվեսն եկավ:

- Էս սարը իմն է,

Էս ծառը իմն է...
Հազիվ էր ասել, Կկուն բնից գլուխը
հանեց՝

- Սուտ ես ասում, դու **խաբերա**,

Անխիդճ գազան, անկուշտ, ագահ:
Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է հավասար:
Ի՛նչ ես եկել սուտ տեր դարձել,
Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,

Ձագուկներըս տըվել եմ քեզ...

Կորի՛, գընա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան **սուտ** ես ասել.
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.
Կացին չունես ծառը կտրես:

- Ո՞վ ասավ քեզ:

- Ագռավն ասավ:

- Ագռա՞վը, լա՛ վ:

Ու Ագռավի վրա **քարկացած** Աղվեսը պոչը
քաշեց, հեռացավ:

Գնաց մի դաշտում սուտմեռուկի տվավ,
վեր ընկավ, իբրև թե սատկել է:
Ագռավն էլ կարծեց՝ իրավ սատկել է, թռավ
եկավ վրեն իջավ, որ աչքերը հանի:
Աղվեսը՝ հա՛ փ, հանկարծ բռնեց:

- Ղա՛ -ղա՛, ղա՛ -ղա՛,

Աղվես աղա...

- Ա՛յ դու կռավան չարալեզու,

Ո՛նց թե Կկվին ասել ես դու,

Թե ես կացին չունեմ սրած...

Կացին չունե՛մ... դե՛ հիմի կա՛ց...

- Վա՛յ, քեզ մեղա,

Աղվես աղա,

Ես եմ ասել, չեմ ուրանամ,

Ինձ քրքրի, ինձ կեր հում-հում,

Տո՛ւր ինչ պատիժ սիրտդ կուզի,

Հարցեր և առաջադրանքներ

Բայց մի վերջին խոսքս լսի:

Ես էն սարում, հենց դեմ ու դեմ,

Էնպես մի թանկ պահուստ ունեմ,

Որ չես գտնի դու քո օրում

Ոչ մի թառում կամ անտառում:

Ընչի՞ համար էն **սհագին**

Գանձը կորչի հողի տակին:

Արի գնանք, հանեմ տամ քեզ,

Էնքան ուտե՛ս, էնքան ուտե՛ս...

Թե չլինի ու **սուտ** դուրս գամ,

Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...

- Գնա՛նք, ասավ Աղվեսը:

Թե կլինի, շատ լավ,

թե չի լինի, էլի քեզ կուտեմ:

Գնացին: Վերևից թռչելիս

Ագռավը նկատել էր, որ մի թփում

պառկած էր գյուղացու շունը:

Աղվեսին տարավ, տարավ, դուրս բերավ

ուղիղ էն թփի վրա:

- Ա՛յ, ասեց. ես թփումն է իմ պահուստը:

Աղվեսն **ագահ** վրա ընկավ թփին. շունը

վեր թռավ, կոկորդից բռնեց ու դրեց

տակին:

Աղվեսը խեղդվելով սկսավ խոխոալ.

Ա՛խ, ե՛ս... ա՛խ, ե՛ս...

Զգույշ Աղվես,

Փորձանքի մեջ

Ընկնեմ էսպե՛ս...

Ա՛խ, անիրա՛վ

Դու սև Ագռավ...

Ինչքան էլ որ լինիս գգույշ,

Չարի համար թե վաղ, թե ուշ,

Էդ է պահված, Աղվես աղա,

Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛ ...

Պատասխանեց Ագռավն ու թռավ:

1. Անձանոթ բառերը բացատրի՛ր, օգտվի՛ր [առցանց բառարանից](#):
2. Քանի՞ հերոս կա հեքիաթում: Թվարկի՛ր նրանց անունները:
3. Գրի՛ր ընդգծված բառերի հականիշներն ու հոմանիշները:
4. Նշի՛ր հեքիաթի ամենաուրախ հատվածը:
5. Նշի՛ր հեքիաթի ամենատխուր հատվածը:
6. Ինչպիսի՞ մայրիկ էր կկուն:
7. Ինչպիսի՞ն էր աղվեսը:
8. Աղվեսին նամակ գրի՛ր:
9. Կկվի անունից շանը նամակ գրի՛ր և շնորհակալություն հայտնի՛ր նրան:
10. Նոր ավարտ հորինի՛ր հեքիաթի համար:

Մանուկն ու ջուրը

Հովհաննես Թումանյան

Ամպոտ սարեն ուրախ ձենով
Ջուր է գալիս, անցնում շենով:

Մի թուխ մանուկ դուրս է վազել,
Ձեռքն ու երես պաղ լվացել,
Լվացել է ձեռքն ու երես,
Ու դարձել է՝ խոսել էսպես.

- Դու ո՞ր սարեն կուգաս ջրի՛կ,
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն սարեն կուգամ մթին,
Որ հին ու նոր ձյունն է գլխին:

- Դու ո՞ր առուն կերթաս, ջրի՛կ.
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն առուն կերթամ զվարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

- Դու ո՞ր այգին կերթաս, ջրի՛կ.
Իմ պաղ ջրիկ ու անուշիկ:
- Ես էն այգին կերթամ դալար,
Որ տերն է ժիր մեջն այգեպան:

Հարցեր և առաջադրանքներ

1. Գտի՛ր հետևյալ բառերի

Ա. հոմանիշները

մանուկ -

դալար -

Բ. հականիշները

ժիր -

պաղ -

2. Որտեղի՞ց է հոսում առվակը: Նշի՛ր այն տողերը, որտեղ դա երևում է:

3. Նկարի՛ր քո պատկերացրած առվակը:

Անխելք մարդը

Հովհաննես Թումանյան

Ժամանակով մի աղքատ մարդ կար. որքան աշխատում էր, որքան չարչարվում էր, դարձյալ միևնույն աղքատն էր մնում:

Հուսահատված մի օր նա վեր կացավ, թե՛ պետք է գնամ գտնեմ աստծուն, տեսնեմ՝ ես երբ պետք է պրծնեմ այս աղքատությունից, ու ինձ համար մի բան խնդրեմ:

Ճանապարհին մի գայլ պատահեց.

- Առաջ բարի, մարդ-ախպեր, ո՞ւր ես գնում,- հարցրեց գայլը:

- Գնում եմ աստծու մոտ,- պատասխանեց աղքատը,- դարդ ունեմ ասելու:

- Դե որ գնաս աստծու մոտ,- պատասխանեց գայլը,- ասա մի սոված գայլ կա, գիշեր-ցերեկ ման է գալիս սարուձոր, ուտելու բան չի գտնում, ասա՝ մինչև ե՞րբ պետք է սոված մնա. որ ստեղծել ես՝ ինչո՞ւ չես կերակուր հասցնում:

- Լավ,- ասաց մարդն ու շարունակեց ճանապարհը:

Շատ գնաց թե քիչ, պատահեց մի սիրուն աղջկա:

- Ո՞ւր ես գնում, ախպեր,- հարցրեց աղջիկը:

- Գնում եմ աստծու մոտ:

- Երբ որ աստծուն տեսնես,- աղաչեց սիրուն աղջիկը,- ասա այսպիսի մի աղջիկ կա՝ ջահել, առողջ, հարուստ, բայց չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ իրան. ի՞նչ պիտի լինի նրա ճարը:

- Կասեմ.- խոստացավ ճամփորդն ու գնաց. պատահեց մի ծառի, որ թեև ջրափին էր կանգնած, բայց չոր էր:

- Ո՞ւր ես գնում, ա՛յ ճամփորդ,- հարցրեց չոր ծառը: - Գնում եմ աստծու մոտ:

- Դե կանգնի՛ր, մի երկու խոսք էլ ես ապսպրեմ,- խնդրեց չոր ծառը,- աստծուն կասես՝ այս ի՞նչ բան է. բուսել եմ այս պարզ ջրի ափին, բայց ամառ-ձմեռ չոր եմ մնում. ե՞րբ պետք է ես էլ կանաչեմ:

Այս էլ լսեց աղքատն ու շարունակեց ճանապարհը:

Այնքան գնաց, մինչև գտավ աստծուն: Մի բարձր ժայռի տակ, մեջքը ծառին դեմ տված, ալևոր մարդու կերպարանքով նստած էր աստվածը:

- Բարի օր,- ասաց աղքատն ու կանգնեց աստծու առաջին:

- Բարով եկար,- պատասխանեց աստված,- ի՞նչ ես ուզում:

- Էն եմ ուզում, որ ամեն մարդի էլ հավասար աչքով մտիկ անես, մեկին ավար չանես, մյուսին՝ խավար. ես այնքան տանջվում, աշխատում եմ, էլ չեմ կարողանում կուշտ փորով հաց գտնեմ, իսկ շատերը, որ իմ կեսի չափ էլ չեն աշխատում, հարուստ ու հանգիստ ապրում են:

- Դե գնա, հիմի կհարստանաս, քո բախտը տվեցի, գնա վայելի՛ր,- ասաց աստված:

- Էլ բան ունեմ ասելու, Տե՛ր,- ասաց աղքատն ու պատմեց սոված գայլի, սիրուն աղջկա ու չոր ծառի ապսպրանքը:

Աստված բոլորի պատասխանը տվեց, և աղքատը շնորհակալություն արավ ու հեռացավ:

Վերադարձին պատահեց չոր ծառին:

- Ինձ համար ի՞նչ ասաց աստված,- հարցրեց չոր ծառը:

- Ասաց, քո տակին ոսկի կա. մինչև այդ ոսկին չհանեն, որ արմատներդ հողին հասնի, դու չես կանաչիլ,- պատմեց մարդը:

- Էլ ո՞ւր ես գնում. արի՛ ոսկին հանիր, էլի, հա՛մ քեզ օգուտ կլինի, հա՛մ ինձ, դու կհարստանաս, ես էլ կկանաչեմ:

- Չէ՛, ես ժամանակ չունեմ, շտապում եմ,- պատասխանեց աղքատը,- աստված ինձ բախտ տվեց, ես շուտով պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,- ասաց ու գնաց: Հետո սիրուն աղջիկը պատահեց ու ճամփորդի առաջը կտրեց.

- Ի՞նչ լուր բերիր ինձ համար:

- Աստված ասաց՝ դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինի, ուրախ ու երջանիկ կլինես:

- Դե որ այդպես է, արի՛, դու եղիր իմ կյանքի մտերիմ ընկերը,— թախանձեց աղջիկը ճամփորդին:

- Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ,- ասաց աղքատն ու հեռացավ:

Ճանապարհին սպասում էր սոված գայլը, հեռվից հենց որ տեսավ ճամփորդին, վազեց առաջը կտրեց:

- Հը՛, աստված ի՞նչ ասաց:

- Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին. աղջիկն ապսպրեց, թե ինչու ինքը չի կարողանում ուրախանալ, ծառն էլ թե՛ ինչո՞ւ է գարուն-ամառ չոր: Աստծուն պատմեցի, ասաց. «Աղջկանն ասա՛ իրան համար մի կյանքի ընկեր գտնի՛ կբախտավորվի, ծառին էլ ասա՛ քո տակին ոսկի կա, պետք է այդ ոսկին հանեն, արմատներդ հողին հասնեն, որ կանաչես»: Եկա իրանց պատմեցի աստծու խոսքերը. ծառն ասաց՝ դե արի, հանիր ոսկին տար, աղջիկն էլ թե՛ ես հենց քեզ եմ ընտրում ինձ ընկեր: Ասացի. «Չէ՛, ախպեր, չեմ կարող, աստված ինձ բախտ է տվել, պետք է գնամ իմ բախտը գտնեմ, վայելեմ»:

- Իսկ ինձ համար ի՞նչ ասաց աստված,- հարցրեց սոված գայլը:

- Քեզ համար էլ ասաց՝ սոված ման կգաս, մինչև մի անխելք մարդ կգտնես, կուտես, կկշտանաս:

- Էլ քեզանից անխելք մարդ ո՞րտեղից գտնեմ, որ ուտեմ,- ասաց գայլն ու կերավ անխելք աղքատին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բացատրի՛ր.

Ապսպրել –

թախանձել –

2. Թվի՛ր հեքիաթի բոլոր հերոսներին: Նրանց անունները գրի՛ր այբբենական կարգով:
3. Պատմի՛ր գայլի, ծառի, աղջկա մասին:
4. Քեզ ո՞ր հերոսն ամենից շատ դուր եկավ: Ինչո՞ւ:
5. Ո՞րն է հեքիաթի ամենաանխելք նախադասությունը: Նշի՛ր:
6. Հեքիաթի հերոսներին հարցեր տուր և փորձի՛ր հերոսների անունից պատասխանել ընկերներիդ տված հարցերին:
7. Հեքիաթը գայլի անունից համառոտ պատմի՛ր: Պատումը ներկայացրո՛ւ բլոգումդ:

Օգտագործված աղբյուրներ

- [«Իմացումի հրճվանք» լաբորատորիա](#)
- [«Պարտեզ» ամսագիր](#)
- [Վիքիպեդիա ազատ հանրագիտարան](#)